

30(568)
21.10.2019

Ֆրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զիմաստությունն և գիտարար, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

ԱՐՅԱՆԸ ԼԻԱՐԺԵՔ ՃԱՆԱԳՆԵԼԻ ԳԱՐՉՆԵԼ ԱՆԽԱՐՀԻՆ

Արցախի Հանրապետության միջազգային ճանաչումը մեր պետության գերակա խնդիրներից է: Թե՛ 1992-1994 թվականների Արցախյան պատերազմը և թե՛ 2016 թվականի ապրիլյան ռազմական էսկալացիան մեզ հուշում են, որ Արցախը երբեք չի հրաժարվելու Արցախին ուժով տիրանալու մտադրությունից: Իսկ հետևությունը մեկը պիտի լինի՝ անհրաժեշտ է «վառողը չոր պահել վառողամանում»:

Ձուգահեռաբար օրախնդիր է նաև արտաքին քաղաքական շփոթմանը ակտիվացումը, ի մասնավոր՝ օտարերկրյա պետությունների տարբեր շրջանների ու քաղաքների հետ ԱՀ ապակենտրոնացված համագործակցությունն ամրապնդելը, արդեն առկա միջազգային կապերին նոր ազդակ հաղորդելը, Արցախին աջակցող սուբյեկտներին, քաղաքական և հասարակական գործիչներին միավորող ցանց ստեղծելը: Այդ ուղղությամբ աշխատանքներ շարունակաբար տարվում են, և հենց դրան էր միտված հոկտեմբերի 11-ին Ստեփանակերտում կայացած համաժողովը, որը կրում էր «Համագործակցություն՝ հանուն արդարության և խաղաղության» խորագիրը: ԱՀ արտաքին գործերի նախարարության և Հայ Հեղափոխական Դաշնակցության Հայ Դատի կենտրոնական խորհրդի նախաձեռնած միջոցառմանը մասնակցում էին երեք տասնյակ երկրներից ժամանած ավելի քան 150 գործիչներ:

Համաժողովում հանդես գալով՝ Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը վերահաստատել է Արցախի իշխանությունների պատրաստակամությունը ԵԱՀԿ Մինսկի խմբի հովանու ներքո, բանակցային սեղանի շուրջ Արցախին հետ հարաբերությունների խաղաղ կարգավորմանը: Լուրջ հաջողությունների գրանցումն անհնարին է առանց բանակցային գործընթացին Արցախի լիիրավ մասնակցության, Արցախի ճակատագիրը չի կարող որոշվել առանց նրա մասնակցության, ուստի չի կարող լինել վերադարձ անցյալին՝ լինի դա կարգավիճակի, թե սահմանների առումով, նշել է երկրի ղեկավարը:

Քննարկումներ են ծավալվել երկու թեմաների շուրջ՝ «Արցախի ժողովրդի հիմնորոշման իրավունքը և խաղաղ կարգավորման գործընթացը» և «Արցախի Հանրապետության միջազգային կապերի ընդլայնման հնարավորությունները տնտեսական, մշակութային ու գիտակրթական ոլորտներում՝ Արցախի մեկուսացմանն ուղղված Արցախի քաղաքականությանը դիմագրավելու նպատակով»:

Ազգային ժողովի նախագահ Աշոտ Դուլյանի ելույթը նվիրված էր Արցախի խորհրդարանական դիվանագիտության նոր հնարավորություններին: Այս շրջանակում նա միջոցառման մասնակիցներին ներկայացրել է արտաքին քաղաքականության բնագավառում խորհրդարանի կողմից իրականացվող աշխատանքներն ու դրանք ակտիվացնելու հնարավորությունները:

Արտգործնախարար Մասիս Մայիլյանը տեղեկացրել է, որ նմանատիպ համաժողով անցկացնելու գաղափարը ծագել է մոտ երկու տարի առաջ: Իր ելույթում նա երախտագիտություն է հայտնել արտերկրի բարեկամներին այն բանի համար, որ փորձությունների օրերին միշտ եղել են Արցախի հետ: «Արցախի ճակատագրում ունեցած ձեր ավանդը անգնահատելի է», - ասել է նա:

Համաժողովում ելույթ են ունեցել նաև ԱՀ պետնախարար Գրիգորի Մարտիրոսյանը, կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանը, մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարար Լեռնիկ Հովհաննիսյանը, ճանաչված հայ և օտարազգի հասարակական-քաղաքական գործիչներ:

Համաժողովը ընդունել է հռչակագիր, որում կոչ է արվել միջազգային հանրությանը ձեռնարկել անհրաժեշտ բոլոր քայլերը՝ ժողովրդավարության առաջնությունը, ինչպես նաև տարածաշրջանում խաղաղության և կայունության ամրապնդմանն ուղղված միջազգային համագործակցության մեջ Արցախի լիարժեք մասնակցության խոչընդոտները վերացնելու ուղղությամբ: Միաժամանակ հայտարարվել է Արցախի բարեկամների միջազգային ցանց՝ «Պրո Արցախ», ստեղծելու մասին՝ միջազգային հարթակում Արցախի մասին տեղեկացվածությունը բարձրացնելու, նրա ժողովրդի օրինական շահերը պաշտպանելու, միջազգային գործընթացներում Արցախի ներգրավմանն աջակցելու նպատակով:

«ԼՍԱՐԱՐ»

ԱՐՅԱՆ - ՖՐԱՆՍԻԱ. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ



Յոկտեմբերի 12-ին «Արմենիա» հյուրանոցի ժողովարանում գումարվեց «Պոլ Էյուարի տուն» ֆրանկոֆոնիայի կենտրոն» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի հերթական նիստը: Ինչպես հայտնի է, հիմնադրամը ստեղծվել է 2015թ. դեկտեմբերի վերջին՝ ԱՀ կառավարության նախաձեռնությամբ: Խորհրդի նիստը վարեց ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանը, որն ի պաշտոնե հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահն է: Ներկա էին ԱՀ պետական նախարար Գրիգորի Մարտիրոսյանը, հոգաբարձուների խորհրդի անդամներ՝ ԱՀ արտաքին գործերի նախարար Մասիս Մայիլյանը, ֆրանսիական բարեկամ քաղաքների քաղաքապետներին միավորող միության նախագահ Ֆրանսուա Ռոշբլուանը: Օրակարգի առաջին հարցը հոգաբարձուների խորհրդի կազմի փոփոխության վերաբերյալ էր: Խորհրդի նախագահ Ն.Աղաբալյանը հայտարարեց, որ ընդառաջելով ֆրանսիական կողմից ցանկացված 2019-ի հուլիսի 31-ի ԱՀ կառավարության որոշմամբ փոփոխություն է կատարվել խորհրդի կազմում՝ նպատակ ունենալով ավելի մեծ թափ հաղորդել «Պոլ Էյուարի տուն» ֆրանկոֆոնիայի կենտրոնի» շինարարության և նրա գործունեության աշխատանքներին: Ընդհանրապես հիմնադրամի անդամներ են հանդիսանում նաև նրա գործադիր տնօրենը, Ստեփանակերտ, Շուշի, Ֆրանսիայի Վալանս և Արժոնի քաղաքների քաղաքապետները, Ֆրանսիայում ԱՀ, «Հայաստան» համահայկական հիմնադրամի Ֆրանսիայի տեղական մարմնի ներկայացուցիչներ:

Մինչ այսօր ձևավորվել է 12 խումբ՝ ավելի քան 130 ուսանողներով, որոնց թվում են «Արցախ-Ֆրանսիա բարեկամության շրջանակի» անդամներ, արտգործնախարարության աշխատողներ, «Եզնիկ Մոզան» արհեստագործական ուսումնարանի վարպետներ, բժիշկներ, հյուրանոցի աշխատողներ և ուրիշներ: Մասնակիցների մի մասը վերապատրաստվել է Ֆրանսիայում, ինչպես և այնտեղից են իրավորվել մասնագետներ: Կենտրոնի կարևորագույն գործունեությունից մեկն էլ Ֆրանկոֆոնիայի միջազգային օրվա նշումն է և նրան նվիրված միջոցառումների անցկացումը, որի ժամանակ Ֆրանսիայից Արցախ ժամանած հյուրերին ներկայացվում է մեր մշակույթը, և թե ինչպես են արցախցիները ծանոթանում ֆրանսիական մշակույթին:

Անցած չորս տարիների ընթացքում Կենտրոնի կողմից կազմակերպվել են 17 մշակութային միջոցառումներ: Պոլ Էյուարի տուն ֆրանկոֆոնիայի կենտրոնը զբաղվելու է ֆրանսերեն լեզվի տարածմամբ ոչ միայն մայրաքաղաքում, այլև շրջաններում, և ֆրանսերենի տիրապետելու շնորհիվ ավելի մեծ հնարավորություններ կստեղծվեն մասնագետների վերապատրաստման համար:

Կենտրոնի ղեկավարությունը համատեղ աշխատում է ԱՀ ԱԳՆ, առողջապահության, ԿԳՄ նախարարությունների և տարբեր ուսումնական հաստատությունների հետ:

Ն. Աղաբալյանը հավելեց, որ ֆրանսերենի ուսուցման հետ կապված աշխատանքներն արդյունավետ են: Արցախի դպրոցներում ֆրանսերենն ուսումնասիրվում է որպես երրորդ օտար լեզու, և եթե մինչև այս ուսումնականը այն ուսումնասիրվում էր մինչև 9-րդ դասարանը, այս տարվանից՝ նաև ավագ դպրոցում, իսկ եկող տարվանից կմտցվի նաև բուհ՝ շարունակական կրթություն ապահովելու նպատակով:

ԱՀ ԱԳ նախարար Մ. Մայիլյանը Կենտրոնի կատարած աշխատանքները համարեց բավարար և այդ կապակցությամբ

շնորհակալություն հայտնեց Նեյլի Ավանեսյանին՝ գտնելով, որ վերջինս պետք է շարունակի իր տեղն ունենալ Հիմնադրամի կրթական ծրագրերում:

Ֆրանսիական բարեկամ քաղաքների քաղաքապետներին միավորող միության նախագահ Ֆրանսուա Ռոշբլուանը, անդրադառնալով հիմնադրամի նպատակներին, ասաց, որ գլխավորը Արցախի և Ֆրանսիայի քաղաքների միջև բարեկամության հաստատումն է: «Քոլորդ էլ գիտեք, թե այս Հռչակագրերի ընդունումն ինչքան դժվար է, որովհետև դատական պրոցեսներ են ընթանում: Ֆրանսիական քաղաքապետները շատ ամուր դիրքորոշում ունեն այս հարցի կապակցությամբ և մեծ ցանկություն ունեն Արցախի հետ համագործակցելու: Բայց դրա համար անհրաժեշտ է իմանալ, թե Արցախում, նրա քաղաքներում ինչ կարիքներ կան, որպեսզի ֆրանսիացի քաղաքապետները ծրագրերի տեսքով համագործակցության առաջարկներ ներկայացնեն: «Պոլ Էյուարի տուն» ֆրանկոֆոնիայի կենտրոնը զլխավոր նպատակը դա է: Իհարկե, այն, ինչ արվել է, շատ ավել է, բայց ես կուզեմայի ժիրայր Գերգեյանին, որն այսուհետ պետք է ղեկավարի Կենտրոնը, խնդրել, որ այս նպատակը չմոռացվի առաջիկայում»:

ԱՀ ԿԳՄ նախարար Ն. Աղաբալյանը, շնորհակալություն հայտնելով Ն. Ավանեսյանին կատարած աշխատանքի համար, նշեց, որ շատ կարևորում է ֆրանսիական և արցախյան բոլոր քաղաքների բարեկամությունը և երախտագիտության խոսք հղեց ֆրանսիացի քաղաքապետների հասցեին՝ ասելով, որ Արցախում տեղյակ են, թե ինչքան բարոյություններ են հաղթահարում նրանք այդ բարեկամությունը շարունակելու համար: Այդ օրն էլ ֆրանսիական մի պատվիրակություն Մարտակերտում էր այնտեղ «Արմաթ» ինժեներական լաբորատորիայի հիմնադրման նպատակով: «Իհարկե, նման ձեռնարկները պարտավորեցնող են, և մենք ավելի շատ կաշխատենք թե՛ ֆրանսերենի տարածման և թե՛ բարեկամության ընդլայնման ուղղությամբ»:

Ն. Աղաբալյանն ապա ներկայացրեց համագործակցության համաձայնագիրը, որի կողմերը՝ ԱՀ կառավարությունը, «Հայաստան» համահայկական հիմնադրամի Ֆրանսիայի մարմինը և «Ֆրանսախոսությունը Արցախում» կազմակերպությունը, հիմք ընդունելով նախկինում ձեռք բերված պայմանավորվածությունները՝ պարտավորվելով իրականացնել շինարարական համալիրի կառուցման ծրագիրը, որտեղ

տեղակայված կլինի Պոլ Էյուարի տուն ֆրանկոֆոնիայի կենտրոնը, ցանկություն են հայտնել ճշտել նոր ծրագրի իրագործման պայմանները:

Համաձայնագրով կողմերը համապատասխանաբար պարտավորվում են կոնկրետություն տալ Ֆրանսիայի և Արցախի համայնքների միջև ստորագրված բարեկամական հռչակագրերին, Արցախի հայկական միջավայրում արմատավորել ֆրանսախոսությունը, ամրապնդել կապերը Ֆրանսիայի հետ, Ֆրանսիա-Արցախ համագործակցության շրջանակում տարածել ֆրանսերենի դասավանդումը երիտասարդ արցախցիների շրջանում՝ որպես սոցիալ-մասնագիտական զարգացման միջոց, ստեղծել կենտրոն և բարենպաստ միջավայր ֆրանսերենի դասընթացների կազմակերպման ու մասնագիտական վերապատրաստման ծրագրերի իրականացման, ինչպես նաև միջմշակութային և կրթական փոխանակությունների համար և Արցախի երիտասարդների համար ստեղծել բարենպաստ պայմաններ զարգացման համար: Շարունակել Հայաստանում և Արցախում սոցիալ-տնտեսական ծրագրերի ֆինանսավորման առաքելությունը, ապահովել մշակութային-անիմացիոն հարթակների ստեղծումը տեղի երիտասարդության համար՝ նրանց խրախուսելով ապրել իրենց հայրենի երկրում՝ միաժամանակ ապահովելով շփումը արտաքին աշխարհի հետ:

Նպատակ կա այդ կենտրոնը ստեղծել որպես մի կամուրջ, որը հագեցած կլինի կրթական, մշակութային, տնտեսական կողմերի կողմից համաձայնեցված տարբեր բնագավառների միջոցառումներով:

ԱՀ կառավարության անուհից պետական նախարար Գրիգորի Մարտիրոսյանը ողջունեց Կենտրոնի կառուցման ծրագիրը՝ համոզված, որ այն մեծ ներդրում կունենա Արցախի մշակութային և կրթական կյանքում, ինչպես նաև զեղեցիկ ճարտարապետական տեսքով անկասկած իր արժանվույն տեղը կգրավի Ստեփանակերտի ճարտարապետական համալիրում:

Համաձայնագիրը տեղում ստորագրեցին Ֆրանսուա Ռոշբլուանը և Գրիգորի Մարտիրոսյանը: Հիմնադրամի նոր գործադիր տնօրեն Ժ. Գերգեյանը ներկայացրեց շինարարական ծրագիրը, 2020-2021թթ. կատարողականի բյուջեն:

«Պոլ Էյուարի տուն» ֆրանկոֆոնիայի կենտրոնի» բացումը տեղի կունենա եկող տարվա սեպտեմբերի 2-ին՝ ԼԳՀ հռչակման օրը:

Ս. ԽԱԶՆՏՅԱՆ

ՄԵԹՈՂԱԿԱՆ

ԱՌԱՋԱՊՐԱՆՔ ԿԱԶՄԵԼՈՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԵԹՈՂՆԵՐԸ

Առաջադրանքը յուրաքանչյուր դասապրոցեսի կարևոր բաղադրիչն է, և նրա ճիշտ ու նպատակային լինելը խոսում է ուսուցչի հմտության ու փորձառության մասին: Նախևառաջ պետք է հաշվի առնել այն համագամանքը, թե հատկապես դասապրոցեսի որ փուլի համար է նախատեսվում տվյալ առաջադրանքը:

Եթե կիրառվելու է առաջին փուլում, հարկ է, որ այն ներառի նախորդ դասին քննարկված նյութից ինչ-ինչ հարցադրումներ՝ նպատակ ունենալով ամրապնդելու յուրացված գիտելիքը: Եթե տրվելու է որպես անցած ու նոր նյութերը կապող աշխատանք, ապա այն անպայման պետք է ունենա մարտահրավեր և մտածողությունը խթանող հարցադրում: Իսկ դասի վերջին փուլում հանձնարարվող առաջադրանքները հիմնականում գիտելիքի յուրացման մակարդակն ստուգող, հայտորոշիչ բնույթի գործիքներ են:

Տնային աշխատանքի համար նախատեսված առաջադրանքը պետք է միտված լինի դասարանում ներկայացված նոր հասկացությունների ամրապնդմանը, և շատ կարևոր է, որ նմանատիպ առաջադրանք ուսուցչի վերահսկողությամբ կատարված լինի:

Հաջորդ համագամանքը, որ անհրաժեշտ է հաշվի առնել առաջադրանքի մշակման գործընթացում, աշխատանքի հանձնարարման ձևն է՝ անհատական, զույգերով, խմբային, թե՛ տնային է լինելու տվյալ առաջադրանքը: Այսինքն՝ պետք է պլանավորել հանձնարարվելիք աշխատանքը, հստակեցնել սովորողներից ակնկալվելիք պատասխանները՝ նպատակ ունենալով ապահովելու ավելի բարձր վերջնարդյունքներ: Ի վերջո, ԱՌԱՋԱՊՐԱՆՔԸ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ Է, ՈՐ ԿԱՊՎՈՒՄ Է ՂԱՍԻ ՆՊԱՏԱԿԻՆ ԵՎ ՎԵՐՋՆԱՐՅՈՒՆՔՆԵՐՆ:

Առաջադրանքի հանձնարարման և դրա հետ կապված արդյունավետ աշխարհային կարևոր պայման է ժամանակի կառավարումը: Պետք է հաշվի առնել հետևյալ փուլերը.

1. առաջադրանքի հանձնարարում.
2. մտածելու հնարավորություն.
3. պատասխանի մեկնաբանություն.
4. հետադարձ կապի տրամադրում:

Առաջադրանք կազմելու և կիրառելու մյուս կարևոր սկզբունքն այն է, որ պետք է խուսափել հանձնարարությունների միօրինակությունից. բազմաբնույթ առաջադրանքները հետաքրքրություն և ակտիվություն են ստեղծում սովորողների մոտ, ապահովում դասի արդյունավետությունը:

Ուսումնասիրելով խմբի կազմն ու կարողությունները՝ առաջադրանքների հանձնարարման համար անհրաժեշտ է հաշվի առնել ուսուցման տարբերակվածությունը: Տարբերակում կարելի է կիրառել՝ հիմք ընդունելով ինքնուրույն աշխատանքի ժամանակ սովորողների անհատական առանձնահատկությունները, խմբային աշխատանքի ժամանակ՝ խմբերի կազմը, առաջադրանքի ծավալը, վերջնարդյունքը և այլն:

Տարաբնույթ առաջադրանքներ կազմելիս կարևոր են համարում նրանց ճանաչողական ու գաղափարական նշանակությունը, աշակերտների ընդհանուր զարգացածությանը նպաստելու հանգամանքը. այս ուստարվա ընթացքում մշակել են տարատեսակ տեքստային առաջադրանքներ տարբեր թեմաների վերաբերյալ՝ նվիրված Կոմիտաս վարդապետի ծննդյան 150-ամյակին՝ նպատակ ունենալով սովորողներին ներկայացնելու հայ մեծ երգահանի կյանքին ու գործունեությանը վերաբերող կարևոր հանգամանքները (ստորև ներկայացված տեքստերը կազմվել են ըստ Մ. Գալշոյանի «Ծիրանի ծառ» ժողովածուի):

Մանկավարժական գործունեության ընթացքում ուսուցչի կողմից ցանկալի է տարատեսակ առաջադրանքների փորձարկումը: Հայոց լեզվի դասապրոցեսին նպատակահարմար է կազմել կամ ընտրել տեքստեր, որոնք կարելի է օգտագործել տարբեր հանձնարարությունների դեպքում (տեխնոլոգիական հնարավորությունները տրամադրում են գործողությունների մասն հարթակ), այսինքն՝ նպատակահարմար են բազմակի օգտագործման տեքստերը: Տվյալ

դեպքում ներկայացված տեքստերը կարելի է օգտագործել առնվազն երեք տիպի առաջադրանքների դեպքում, նաև հանձնարարել տնային աշխատանք՝ դարձյալ նույն տեքստերի բովանդակային հնարավորությունները հաշվի առնելով:

Առաջադրանքներ խմբային աշխատանքի համար «Հատուկ գոյականներ» թեմայի վերաբերյալ

Առաջադրանք Ա. Տեղադրել տրված հատուկ անունները՝ հարմարեցնելով տեքստի բովանդակությանը:

1. Պոլսո հայաշատ թաղամասն էր, թաղի շենք ու շինություններին ստվեր ձգողը՝ : Վանքը զանգ զարկող ու խունկ ծխող ուներ, իսկ բակում հայոց ազգային էր:

1912 թվականի աշնան այդ առավոտ վարժարանի բակում ծաղկում էր նորեկ մի ուրախություն.

- Այսօրվանից մեզ երգեցողության դասեր պիտի տա:

Վարժարանի ուղեկցությամբ նա ներս մտավ և դահլիճն ու ողջ ուսանողները մեկեն առավ աչքերի մեջ:

«..... չորս կողմերից մարդ կա այստեղ, ու ամեն մեկի աչքերում՝ իր երգը. մեկի երգը օրոր է, մյուսինը՝ աղոթք, հաջորդինը՝ մոմի մարմանդիկ ու տաք մեղեդի, մի ուրիշինը՝ կարոտի կանչ»,- մտածեց վարդապետը:

Տնօրենը մի պահ լռեց, ապա նայեց ուսանողներին և ասաց.

- Ահա մեր ազգի փառքը՝ մեր երգի

Կոմիտաս վարդապետ, Ղալաթիա, տնօրեն Նալբանդյան, Սուրբ Լուսավորիչը, Մեսրոպ Մաշտոց, Կեղրոնական վարժարան, Հայաստան աշխարհ:

2. Ամառնավերջին բակում հավաքվել էին քսան որբեր: հայացքը կանգ առավ սևաթուխ մանչուկի դեմքին. «Վաղը ինձ հետ Սուրբ Էջմիածին կտանես այս փոքրիկին: Բայց առանց այս որբերը ավելի կորբանան... նրա երգը այս մանուկների ուրախությունն է, հանապազօրյա հացը, տաքությունը: Այս մանչուկի երգը նրանց բերում է ուրիշ ձևի տխրություն, որբի տխրությունից տարբեր... դա անլաց տխրություն է, հանգստացնող, անանձնական ու առնական տխրություն»:

Մանչերը զգում էին, որ հայր սուրբը արտակարգ բան է ասելու:

- Որդայկը,- դիմեց նա թուրքերեն... արգելված էր հայերեն խոսքը,- լուր է ուղարկել, որ ձեզանից մեկին տանեն՝ ուսանելու:

Ղարաբյան ճենարան, Կոմիտաս վարդապետ, Սուրբ Թեոդոս եկեղեցու, Ղարաբյանի կոսր, Սողոմոն, Սուրբ Էջմիածին, Քյոթախիա, հայր Գրիգոր:

3. արդեն առաջվանը չէր, ճենարանի սան չէր, երեսուն տարու մեջ էր նա, կուսակրոն վարդապետ էր, բարձրագույն երաժշտական դպրոցն ավարտած երաժշտագետ

Մենուկ մի դարուղի էր ուղրվում, ու դողալով մենուկ մի ոտավոր՝ սև աչքունքով, սև բեղ ու մորուսով և խոհերով՝ ծանր ու ճնշող:

Նա շփեց ծակատը, և մատների տակից մրմնջացող հիշողությունները ասես ծանրացան շնչին:

Վեց տարի առաջ էր, ինքը դեռ ուսանելու չէր գնացել : մեծ գորք էր ուղարկել Ջարդ էր : բացահայտ թույլ էր տալիս, և ծիծաղում էր աշխարհի վրա, իսկ թղթե շերտիկով վիճարկում էր ճակատագիրը:

«Պետք է ժողվել սար ու ձորերում ցրված երգերը: Ամեն շինական հոգու մեջ երգ ունի: Ու երգը չի հորինվել, այլ ծել է հասկի պես, բայց սպանվածի հետ սպանվել է, գաղթածի հետ գաղթել, իսկ ապրողների մեջ ննջում է երգը: Պետք է փրկել: Երգը ժողովրդի պատմությունն է»,- մտորում էր վարդապետը:

է»,- մտորում էր վարդապետը:

Խրիմյան Հայրիկ, Սուլթան Համիդ, Տաճկահայաստան, Կոմիտաս, Մայր Աթոռ, Սողոմոն, Թուրքիան, Եվրոպա, Սասուն:

Առաջադրանք Բ. Ընդգծել բաղադրյալ հատուկ անունները և տեքստերը դասավորել՝ ըստ նկարագրվող դեպքերի ժամանակային հաջորդականության:

1. Ղալաթիան Պոլսո հայաշատ թաղամասն էր: Թաղի շենք ու շինություններին ստվեր ձգողը՝ Սուրբ Լուսավորիչը : Վանքը զանգ զարկող ու խունկ ծխող ուներ, իսկ բակում հայոց ազգային Կեղրոնական վարժարանն էր:

1912 թվականի աշնան այդ առավոտ վարժարանի բակում ծաղկում էր նորեկ մի ուրախություն.

- Այսօրվանից Կոմիտաս վարդապետը մեզ երգեցողության դասեր պիտի տա...

Վարժարանի տնօրեն Նալբանդյանի ուղեկցությամբ ներս մտավ և դահլիճն ու ողջ ուսանողները մեկեն առավ աչքերի մեջ:

«Հայաստան աշխարհի չորս կողմերից մարդ կա այստեղ, ու ամեն մեկի աչքերում՝ իր երգը. մեկի երգը օրոր է, մյուսինը՝ աղոթք, հաջորդինը՝ մոմի մարմանդիկ ու տաք մեղեդի, մի ուրիշինը՝ կարոտի կանչ»,- մտածեց վարդապետը:

Տնօրենը մի պահ լռեց, ապա նայեց ուսանողներին և ասաց.

- Ահա մեր ազգի փառքը՝ մեր երգի Մեսրոպ Մաշտոցը:

2. Ամառնավերջին Սուրբ Թեոդոս եկեղեցու բակում հավաքվել էին քսան որբեր: Հայր Գրիգորի հայացքը կանգ առավ սևաթուխ մանչուկի դեմքին. «Վաղը ինձ հետ Սուրբ Էջմիածին կտանես այս փոքրիկին: Բայց առանց Սողոմոնի այս որբերը ավելի կորբանան. նրա երգը այս մանուկների ուրախությունն է, հանապազօրյա հացը, տաքությունը, այս մանչուկի երգը նրանց բերում է ուրիշ ձևի տխրություն, որբի տխրությունից տարբեր... դա անլաց տխրություն է, հանգստացնող, անանձնական ու առնական տխրություն»:

Մանչերը զգում էին, որ հայր Գրիգորը արտակարգ բան է ասելու:

- Որդայկը,- դիմեց նա թուրքերեն... Քյոթախիայում արգելված էր հայերեն խոսքը,- Գևորգ կաթողիկոսը լուր է ուղարկել, որ ձեզանից մեկին Սուրբ Էջմիածին տանեն՝ Գևորգյան ճենարանում ստանելու...

3. Սողոմոնը արդեն առաջվանը չէր, ճենարանի սան չէր, երեսուն տարու մեջ էր նա, Մայր Աթոռի կուսակրոն վարդապետ էր, բարձրագույն երաժշտական դպրոցն ավարտած երաժշտագետ Կոմիտասը:

Մենուկ մի դարուղի էր ուղրվում, ու դողալով մենուկ մի ոտավոր՝ սև աչքունքով, սև բեղ ու մորուսով և խոհերով՝ ծանր ու ճնշող:

Նա շփեց ծակատը, և մատների տակից մրմնջացող հիշողությունները ասես ծանրացան շնչին:

Վեց տարի առաջ էր, ինքը ուսանելու չէր գնացել դեռ: Սուլթան Համիդը մեծ գորք էր ուղարկել Սասուն: Ջարդ էր: Եվրոպան բացահայտ թույլ էր տալիս, և Թուրքիան ծիծաղում էր աշխարհի վրա, իսկ Խրիմյան Հայրիկը թղթե շերտիկով վիճարկում էր Տաճկահայաստանի ճակատագիրը:

«Պետք է ժողվել սար ու ձորերում ցրված երգերը: Ամեն շինական հոգու մեջ երգ ունի: Ու երգը չի հորինվել, այլ ծել է հասկի պես, բայց սպանվածի հետ սպանվել է, գաղթածի հետ գաղթել, իսկ ապրողների մեջ ննջում է երգը: Պետք է փրկել: Երգը ժողովրդի պատմությունն է»,- մտորում էր վարդապետը:

Առաջադրանք Գ. Առանձնացնել տրված տեքստերի՝ հայ երգը նկարագրող հատվածները, կազմել կապակցված խոսք՝ ավելացնելով հատուկ անուններ:

Տնային աշխատանք. խմբավորել տեքստե-

րի հատուկ անունները՝ հաշվի առնելով բաղադրիչների քանակը և դրանց՝ մեծատառով գրվելու հանգամանքն ու անհրաժեշտությունը:

Առաջադրանքներ խմբային աշխատանքի համար «Չղրվումներ» թեմայի ամփոփման վերաբերյալ:

1. Ընդգծել արտաքին հոլովումներին ենթարկվող բառերը: Ընդհանրացնել միևնույն հոլովման ենթարկվող բառախմբերը:

«Ու երգը չի հրանցվել, այլ մարդկանց հոգիներում ալիքվել է կանաչ արտի նման, զալիք ամառվա հույսերով, խաղաղ ծնեմվա սպասումով: Հայ շինականը այս օրերին իր կյանքի տերն է և մարդու այն տեսակն է, որ խոսում է Աստծու հետ,- Կոմիտասը տրորեց քունքերը, և մտքերն էլ տրորվեցին:- Պետք է փրկել... Սպանված կնոջ ու մանկան հետ երգը սպանվել է, գաղթածի հետ գաղթել, ապրողների հետ ապրում է. պետք է փրկել երգը»:

Ամառ էր... Շաբաթներով ոտք չէր դիպել դարուղուն, հիմա Գրիգորենք քայլում էին դեպի հասուն արտը, և վերջին ամսվա մեջ առաջին անգամ շնչում էր արահետը:

2. Ընդգծել ներքին հոլովումներին ենթարկվող բառերը: Ընդհանրացնել միևնույն հոլովման ենթարկվող բառախմբերը:

...Տան կտուրին հավիտ ծուխ էր, անկյուններում՝ հոգեպարար ջերմություն ու սյունն ի վեր ձգվող աղոթք... Բակում պառկած պառավ մի շուն ալարում էր քշել ականջներում բզզացող ճանձները:

Իսկ հայր, մայր, եղբայր, քույր կալ ու կուֆի հետ էին...

Կոմիտասի փակ կոպերի տակ Գրիգորի հեքիաթ էր, մի ուրիշ աշխարհ՝ հեռու և չքնաղ, կապույտ լեռների գրկում ծվարած...

- Բայց դա ուրիշ երգ է, այսօրվա հետ կապ չունի, այսօրվա երգը ուրիշ անուն ունի, արյուն է ու որբություն...- հառաչեց Կոմիտասը:- Այսօրվա երգը անտունի է...

3. Ընդգծել այլաձև հոլովումներին ենթարկվող բառերը: Ընդհանրացնել միևնույն հոլովման ենթարկվող բառախմբերը:

Նրանք արդեն երկար գրուցել էին օր ու կյանքից, սեր ու պատվից, հող ու ջրից, տարվա բերքից և հարկ ու տուրքից: Կոմիտասը մտքում համաձայնել էր, բայց պատասխանել.

- Մահվան մասին մտածել և հույսը կորցնել պետք չէ. ինչ էլ լինի, պետք է ապրենք:

Եվ ապա ավելացրել է.

- Գրիգոր, աստծո ամեն առավոտ շենի հագար հարսն ու աղջիկ, կտրին նստած, ծայրիկ են սպասում, որ ծնունդ է տալիս լուսին և հավատին... Երգե՛, Գրիգոր, երգե՛...

Գրիգորը ռիթմիկ շարժեց գլուխը և սկսեց երգել: Կոմիտասի աջը արագ շարժվում էր տետրի էջերով. կորստից փրկվում էր մեղեդին:

...Ու խոնավ հնչյուններով լցված աչքերը շշմջացին.

- Ես ծայնագրեցի այս գիշերը:

Ցանկացած առաջադրանք անհրաժեշտ է ամփոփել, մեկնաբանել և սովորողներին տրամադրել հետադարձ կապ: Ամփոփման համար նպատակահարմար է տեխնոլոգիական հնարավորությունների կիրառումը. անհրաժեշտ է պարզապես ցուցադրել ճիշտ պատասխանը՝ համեմատելու և ստուգելու համար: Այսպիսով՝ կիրառվում են նաև գնահատման տարբեր ձևեր՝ ինքնագնահատում, փոխադարձ և ձևավորող գնահատման տեսակներ:

Կարևոր պայման են համարում աշակերտների պատասխանների քննարկումն ու մեկնաբանումը և նրանց՝ ուսումնառությունը բարելավելու համար հարցեր տալու հնարավորության ընձեռումը:

Մանուշ ԲԱԼՍԱՆ Սյրեփանակերպի Վ. Զհանգիրյանի անվան հ. 11 ավագ դպրոցի հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի

ՍԵՓԱԿԱՆ ՓՈՐՁԻՑ

ԲԱՆԱՎՈՐ ԵՎ ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ ՌՈՒՄԵՐԵՆ ՌԻՍՈՒՅՄԱՔ ԴՊՐՈՅՈՒՄ

«Աստուծո՛ւ հետ խոսելու միակ լեզուն հայերենն է»:

Տորջ ԲԱՅՐՈՆ

«Ոչ մի ազգ գոյության իր կամքն ավելի ուժեղ չի արտահայտել երկու հազար տարվա ընթացքում, որքան հայ ազգը: Ոչ մի ազգ ավելի համառությամբ չի պահպանել և ավելի խնամքով չի մշակել իր սեփական լեզուն»:

ԱՆՈՒՆԱՆ ՄԵՅԻ ՏՐԱՆՍԻՏԻՎ ՀԱՅԱԳԵՆ

Ժամանակակից դպրոցն իր առօրյայով, ուսուցիչների և աշակերտների բնավորության մեջ ուրվագծվող հոգեբանական տեղաշարժերով, հոգսերով ու բարդություններով տաբերվում է նախկին դպրոցից, որն էլ բերում է դասավանդման դժվարությունների և աշակերտների իմացության ցածր մակարդակի: Զմոռանանք նաև մեր ժամանակի բարդությունները, ինքնուրույն կյանքի այն հեղեղը, որ թափվում է աշակերտի գլխին, պատանուին ծոցը, նրան ուսուցումից կտրող հմայքները՝ հեռուստատեսություն, համացանց, կինո, սրճարան և այլն: Զմոռանանք և կյանքի սուր հարցերին, կյանքի ստվերոտ կողմերին նոր սերնդի լավատեսությունը: Նաև ամեն ինչ քննարկելու նրանց կիրքն ու կեցվածքը, չմոռանանք - գաղափարի և իրականության անհամապատասխանության ոչ քիչ դրսևորումները: Եվ այս ամենի դեմ-հանդիման կանգնում է ուսուցիչը: Կանգնում է ամեն օր: Աշակերտը գիտի իր ուսուցիչների անձնական կյանքը, որքան էլ համապատասխանում նրանց քարոզած ճշմարտությունը այն կյանքին, որով իրենք են ապրում: (Ճշմարտության մասին խոսելը ավելի դյուրին է, ճշմարիտ ապրելը է դժվար): Այս ամենի միահյուսումից է այսօր գոյանում «ուսուցչի հեղինակություն» կոչվող առեղծվածը:

Մեր լեզվի յուրահատկություններն ու նրա ուսուցման հետ կապված բարդությունները թելադրում են ընդհանուրից տարբեր յուրահատուկ մոտեցումներ: Երկու գրական լեզուների դարավոր առկայությունը և բարբառների ու բանավոր խոսակցական լեզվի այսօրինակ բազմազանությունն արդեն ծնում են լուրջ բարդություններ:

Եթե գրական-գեղարվեստական լեզուն այսչափ տարբերվում է բանավոր խոսակցական լեզվից, ապա դժվարանում է լեզվի ուսուցումը:

Ուսուցչին և աշակերտին խանգարում է Հայաստանի տարբեր հեռուստատվիզներով հեռարձակվող հայկական սերիալների անորակ և բազմաթիվ սխալներով հնչող խոսքը, նաև տարատեսակ տառախալներ պարունակող գովազդային վահանակները:

Եթե մենք պնդում ենք, որ բոլորը սխալ է, ճիշտ է միայն այսինչ տարբերակը, ապա աշակերտը հայտնվում է տարակուսանքի մեջ. ուրեմն հեռուստացույցը, համացանցը, ծայրասիյունում ու թերթերը խոսում են սխալ, ուրեմն ո՞ւմ է պետք այն ճիշտ հայերենը, որը ոչ մեկը չի օգտագործում, ինչի՞ համար են ես այն սովորում: Նման պայմաններում մեզ համար բարդ է ուսուցչին վայել, պատշաճ դիրքում գտնվել նրա պատկերացումներում և հարողով հստակ, կանոնակարգված լեզվական գիտելիքներ: Մինչդեռ լեզվին պետք է մոտենալ՝ սկսելով հայի միտքից, երբեմն անզգայացած ոգին արթնացնելուց, առանձնապես ռուսական դպրոցում սովորող հայ երեխաների մեջ: Մայրենի լեզվի նկատմամբ պատասխանատվության շրթայի մեջ մեզանից ամեն մեկն իր խնդիրն ունի: Մեր լեզվի համար բարձր պատասխանատվություն կրող մտավորականության շարքում առաջին տեղը պատկանում է ուսուցչին, մասնավորապես մայրենի լեզվի և գրականության ուսուցչին, որովհետև նա համարվում է ուսուցիչների ուսուցիչ, եթե կարելի է այսպես ձևակերպել:

Առանց բացառության՝ բոլոր ուսուցիչները պետք է անթերի իմանան մայրենին: Չի կարելի խեղճուկրակ լեզվով քիմիա կամ մաթեմատիկա սովորեցնել, էլ չեն ասում՝ պատմություն, բնագիտություն կամ աշխարհագրություն:

Ուզում են մի փոքրիկ անդրադարձ կատարել գրավոր և բանավոր խոսքի զարգացմանը ընդհանրապես և ռուսական դպրոցում հայերենի զարգացմանը՝ մասնավորապես:

Մայրենի գործունեության ամբողջ ուսումնական գործը կարծես տարվում է հիմնականում գրավոր խոսքի զարգացման ուղղությամբ:

Գրավոր խոսքը գրի առնված, գրավոր տեսքի վերածված խոսքն է, որը գուրկ է բանավորին հատուկ կառուցվածքային և ոճաարտահայտչական որոշ հատկանիշներից: Գրավոր խոսքի մեջ կարևոր դեր են խաղում գրության եղանակները, կետադրությունը և ուղղագրությունը:

Գրավոր խոսքն ունի չորս կողմ.

- 1. տեխնիկական կամ գրելու համար անհրաժեշտ նորմերի պահպանում,
- 2. տառերի ու գրի վայելչագրական կողմի պահպանում,
- 3. ուղղագրական կամ բառի հնչյունային կազմի տառային արտահայտության ճիշտ պահպանում,
- 4. միտք կամ բովանդակություն, որը գրի առնելիք մտքերի ճիշտ մտապահումն է:

Բառը գրելուց առաջ աշակերտը պետք է ընկալի ու հասկանա ինչպես բառիմաստը, այնպես էլ հնչյունային ու տառային կազմը, որպեսզի այն ճիշտ գրի, գրելու ընթացքում անհրաժեշտ վերլուծություններ ու համադրություններ կատարի:

Մենք՝ ռուսական դպրոցի դասավանդողներս, սաների նկատմամբ ցուցաբերում ենք տարբերակված մոտեցում. առանձնացնում ենք լեզվական տարբեր հնտություններն ունեցող աշակերտներին: Չեն կարող ասել, թե կազմում ենք տարբերակված ծրագրեր, բայց քանի որ համարյա բոլոր դասարաններում տարվա ընթացքում ունենում ենք նոր սաներ, որոնք մեզ մոտ են գալիս Ռուսաստանի տարբեր վայրերից, որոնք նույնիսկ հայերեն տառերը չեն իմանում, ստիպված ենք նրանց հետ աշխատել ըստ լեզվի տիրապետման աստիճանի ու մակարդակի:

Պարզ է, որ այս վիճակը հնարավորություն չի տալիս մեզ հասնելու ցանկալի արդյունքի: Սակայն հայոց լեզու դասավանդող ուսուցիչներն օժանդակում են սովորողների լեզվական կարողությունների զարգացմանն ու կատարելագործմանը, խթանում սովորողի հայրենասեր որակի ձևավորմանն ու հայոց լեզվի նկատմամբ վերաբերմունքի դրսևորմանը:

Քանի որ մեր դպրոցը հայերենի ուսումնասիրության առումով տարբերվում է հայկական դպրոցներից, լեզվի մասնագետների համար գլխավոր խնդիր է դառնում սովորողների լեզվաբերականական գիտելիքների ձեռքբերումը և դրանց կիրառական-գործնական յուրացումը, հայոց լեզվին հատուկ մտածողության զարգացումն ու շարունակական կատարելագործումը: Սա, իհարկե, միշտ չէ, որ մեզ հաջողվում է: Ինչքան էլ քրտնաջան ենք աշխատում, միևնույն է, նույնիսկ ամենաընդունակ ու խելացի աշակերտը շարունակում է մտածել ռուսերեն և մտքում թարգմանել դա, որոշ դեպքերում էլ իր թարգմանությունը բաժրածայն ճշտում է ուսուցչի հետ, եթե նույնիսկ ինքնուրույն աշխատանք է հանձնարարված: Այդ է պատճառը, որ գրեթե բոլոր դասերին ստիպված ենք լինում հայերեն բառերի բացատրությունները ոչ միայն հոմանիշների միջոցով տալ, այլ նաև ռուսերեն բառի միջոցով:

Հնչյունաբանություն, բառագիտություն և քերականություն պետք է ուսուցանել ռուսերենի, երբեմն նաև անգլերենի հետ զուգահեռ մեկնաբանություններով, համադրություններով՝ հաշվի առնելով երեխայի ընկալունակության աստիճանը:

Ստիպված ենք բոլոր նոր բառերը նախապես կազմել շարժական տառերով, վանկային ու հնչյունային վերլուծության ենթարկել, որպեսզի աշակերտները ճիշտ ընկալեն բառի կազմությունը, կանխվեն հնարավոր սխալները: Այստեղ էլ մենք կրկին հանդիպում ենք բարդությունների: Որովհետև բոլորս գիտենք, որ հայերենի հնչյունային համակարգը խիստ տարբերվում է ռուսերենի հնչյունային համակարգից, որն էլ առաջացնում է բազմաթիվ

սխալներ մեր սաների կողմից: Ինչքան էլ բացատրում ենք, ինչքան էլ ընդգծված ենք հնչեցնում և հնչյունը, միևնույն է, աշակերտների 70 տոկոսի թելադրություններում թ է գրվում: Մենք ունենք նաև փ, ք, թ տառերի դեպքում ևս բազմաթիվ սխալներ թե՛ հնչյունն արտասանելիս, թե՛ տառը գրելիս:

Լեզվական համակարգի ուսումնասիրմանը միտված առաջադրանքների մեծ մասը (հատկապես թեմաներն ամփոփող) ուղղված է կապակցված բանավոր և գրավոր խոսքի զարգացմանը: Պետք է անընդհատ հետևել, որ սովորողի խոսքը կառավարված ու միօրինակ չլինի, բայց և ենթարկվի ուսումնական լեզվական օրենքներին ու օրինաչափություններին:

Մեր դպրոցում այլընտրանքային դասագիրք չունենք, առաջնորդվում ենք հայկական դպրոցների համար նախատեսված դասագրքերով ու ծրագրերով, այս ամենին գումարվում են նաև քիչ դասաժամերը:

Դասը մանկավարժական գործընթացի բջիջն է: Մանկավարժության նշանակալի մասը խտանում է դասի մեջ: Այն սովորողների կրթության, զարգացման և դաստիարակության խնդիրների լուծման համար կիրառվող ամենակարևոր գործընթացն է: Ցավոք, հենց սա է դառնում ռուսական դպրոցում հայոց լեզվի պատշաճ մակարդակի չապահովելու պատճառ: Ռուսական դպրոցում հայոց լեզվի և գրականության դասաժամերը սակավ են, առանձնապես տարրական դասարաններում, որը հանդիսանում է դպրոցի հիմնաքարը. ի դեպ, ասեմ, որ տարրական դասարաններում ևս դասավանդում ենք մենք՝ հայոց լեզվի մասնագետներ, առանձին մասնագետ այս դասարաններում չունենք:

Ռուսերեն ուսուցմամբ մեր դպրոցում հայոց լեզվի և գրականության դասավանդման վիճակը շատ բարդ է: Դպրոցում հիմնականում սովորում են հայ երեխաներ, և նրանք պարտավոր են խորապես իմանալ իրենց մայրենի լեզուն, գրականությունը, պատմությունը: Նրանց գիտակցությանը ենք հասցնում, որ մենք ծնվել ենք որպես հայ և եթե անգամ մենք դա չենք ուզում, ուրիշը իր մեջ մեզ չի ընդունի, և մենք կմնանք ոչ ոքի կարգավիճակով, խաղից դուրս: Նրանց հետագա կյանքն ու աշխատանքը նույնպես կապված են լինելու մեր ժողովրդի, հանրապետության հետ և, բնականաբար, անթույլատրելի, նաև անհարգալից է քամահրական որևէ վերաբերմունք հայոց լեզուն ուսուցանելու հարցում: Թեկուզ հայոց լեզվի ուսուցիչներս ջանք չենք խնայում մեր աշխատանքում, այնուամենայնիվ, աննշան առաջընթաց ենք ունենում հայոց լեզվի օլիմպիադաներում:

Մենք չենք կարող իրականացնել հայոց լեզվի սիստեմատիկ գրավոր ուսուցում, անգամ տառուսուցում՝ առանց զուգակցելու բանավոր խոսքի անգիր սերտումին՝ այն խոսքի, որը դասարանից դուրս նրանցից շատերն այլևս ոչ մի տեղ չեն օգտագործում, բայց ձգտում են դժվարությամբ յուրացնել: Դրա համար հենց առաջին դասից մենք տալիս ենք պարզունակ երկխոսություններ ու տեքստեր, որոնք անգիր են արվում և յուրացվում հենց դասաժամի ընթացքում:

Բանավոր խոսքը ևս մարդու մտավոր կարողությունների կարևոր դրսևորումներից է: Բանավոր խոսքի զարգացումը տեղի է ունենում մարդու ողջ կյանքի ընթացքում՝ իր վրա կրելով հասարակության ընդհանուր զարգացածության ամբողջական կնիքը:

Բանավոր խոսքի անընդհատ մշակումը պարտադիր, անընդհատ և հետևողական գործընթաց է, և դրա համար աշակերտին պետք է հնարավորություն ու առիթ տալ խոսելու, ինքնարտահայտվելու: Երբ աշակերտն ազատ խոսելու, իր մտքերը ձևակերպելու, արտահայտելու կարողություն է ձեռք բերում, կարողալը նրա համար ավելի հեշտ է դառնում: Մայրենի դասագրքերում գետեղված գրեթե բոլոր ստեղծագործություններում առկա են գնահատող և դատողական մտքեր: Հենց դասի ժամին աշակերտների հետ միասին ստիպված ենք դրանք բացահայտել, վերլուծել և նրանց ըմբռնել տալ դրանց էությունը, քանի որ շատերի ընտանիքներում նրանց օգնող

չկա, քանի որ ծնողներից շատերը հայերենին լավ չեն տիրապետում կամ ընդհանրապես չեն տիրապետում:

Բանավոր խոսքի զարգացման ամենարդյունավետ ձևը բնական հաղորդակցումն է: Հնարավոր է և անհրաժեշտ է ապահովել բնական հաղորդակցության ձևերի բազմազանություն: Երեխայի ցանկացած գործունեության ժամանակ քաջալերվում է նրա արտահայտվելու ցանկությունը, հնարավորություն տրվում ազատ, անկաշկանդ խոսելու միջոցով ընդլայնել նրա խոսքային հնարավորությունները՝ զգուշորեն օգնելով նրան ունկնդրի համար ավելի հասկանալի արտահայտել մտքերը: Այսպիսի մոտեցման դեպքում հղկվում է աշակերտի խոսքը, ճշգրտվում են լեզվական կառույցները, հստակեցվում ու ավելի ընկալելի է դառնում ասելիքը: Որքան մեծ է սովորողի արտահայտվելու, խոսելու ցանկությունը, այնքան նա փորձում է հասկանալի լինել: Հետևապես՝ եթե ապահովվում է ակտիվ լեզվագործունեություն, դրա ընթացքում նաև մշակվում, հղկվում է խոսքը:

Այսպես, որպեսզի սովորողը ճիշտ խոսի, հստակ և լեզվական առումով ճիշտ ձևակերպի իր ասելիքը, պետք է ուշադրություն դարձնի իր բանավոր խոսքին: Խոսքի թափփվածությունն, իմ կարծիքով, մեր սովորողի բանավոր խոսքի ամենացավոտ բնորոշումներից է: Ինչպես անել, որ սովորողի ակամեջ սղոցի իր կիսատ-պռատ, սխալներով ձևակերպված խոսքը: Նախ՝ ստեղծում ենք բնական հաղորդակցության, ինքնարտահայտման, բնական խոսքի արտահայտման իրավիճակներ: Արհեստական երկխոսություններ, նյութերի վերապատմումները, որ ջանասեր սովորողի համար հիմնականում դառնում են կիսանգիր վերարտադրություն, քիչ են նպաստում կենդանի խոսքի զարգացմանը: Թվային հասանելի տեխնիկան այսօր հնարավորություն է տալիս լսել և հասկանալ սեփական խոսքը, վերահանել բաց թողած սխալները և ինքնուրույն ուղղել դրանք: Բերեն այսպիսի մի օրինակ. տարիներ առաջ իմ դասավանդած դասարաններից մեկում որոշեցի կազմակերպել կլոր սեղան: Լավ սովորող որոշ աշակերտների նախօրոք հանձնարարել է ընթերցել Շիրվանզադեի «Արտիստը» ստեղծագործության բնագիրը: Երբ սկսեցինք քննարկումը, պարզեցի, որ թեմային ծանոթ լինելը բավար հիմք չէ, դասի քննարկում կազմակերպելու համար: Որովհետև ունեինք ակնառու խոսքային վրիպումներ՝ որքան ասես, լեզվական խնդրումներ, լեզվական սխալ կառույցներ՝ նույնպես: Սա այսօրվա մեր բանավոր խոսքի վիճակն է: Ունենք այն, ինչ ունենք: Կարևորագույն խնդիր է սովորողին իր խոսքի նկատմամբ վստահություն ներշնչելը, նրան անկաշկանդ խոսելու, արտահայտվելու հնարավորություն տալը: Պետք է, որ աշակերտը վստահի իրեն, ցանկանա խոսել, հաղորդակցի դարձնել իր մտքերին, պատմել իր խոհերի ու հույզերի մասին: Մեր դպրոցի անհայտն ունեն մեկ կարևոր առավելություն. նրանք չափազանց համարձակ են: Եվ այս որակը օգնում է նրանց բանավոր խոսքի զարգացմանը:

Իհարկե, բանավոր խոսքի զարգացումը միայն մայրենի լեզվի ուսուցչի գործը չէ: Եթե հայկական դպրոցներում ուսումնական ողջ միջավայրն իր բոլոր ուսումնական գործի մասնակիցներով նպաստում է դրան, ապա մեր դպրոցում պատկերը այլ է, քանի որ պատմության, Հայաստանի աշխարհագրության, հայրենագիտության մասնագետներն ունեն ռուսական կրթություն, բայց դասավանդում են հայերեն: Նրանք ժամանակին հատուկ դասընթացներում վերապատրաստվել են, բայց, հարգելի՛ գործընկերներ, երկի բոլորի էլ պարզ կլինի, որ այս առարկաները չեն կարող բավարար ազդեցություն ունենալ հայերենի զարգացման վրա, չխոսենք հակառակի մասին: Թող ներեն ինձ դպրոցի իմ գործընկերները, սրանով նպաստակ չունեի նսեմացնել նրանց աշխատանքը, իրոք, նրանք շատ խելացի ու համարձակ մարդիկ են: Ներկաներից որևէ մեկը երկի չէր համարձակվի ռուսերենով որևէ առարկա դասավանդել:

Բանավոր խոսքը կարելի է զարգացնել նաև զրույցի միջոցով, որի ընթացքում մի

ՆԿԱՐԱԳԻՐ

ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ



Չորս տարեկան զուգակցությունը համար պարտադիր պայման է դառնում դիմացինին ուշադիր լսելը և համապատասխանաբար նրան արձագանքելը: Զրույցի ընթացքում աշակերտին իր ընկերներից նոր հիմնորդացի է ստանում: Հատկապես արդյունավետ են բնականորեն ծնված զրույցները: Պարզապես անհրաժեշտ է որսալ պահը, ակտիվություն հաղորդել դրան, ապահովել զրույցի բնական ընթացքը:

Ստեղծագործելը ևս հանդիսանում է բանավոր խոսքի զարգացման միջոց: Ստեղծագործելը յուրօրինակ մտածելակերպ է: Եթե ցանկանում ենք մտածել սովորեցնել, ապա մախ և առաջ պիտի հորինել սովորեցնեցը: Երեխաները նույնիսկ ամբողջ խմբով կարող են պատմություն հորինել, այն բեմադրել կամ տիկնիկային ներկայացնել հիմք դարձնել, որպես կոմիքս զարգացնել, ծայրագրել ու ընկերներին ուղարկել: Մեր դպրոցում հաճախակի կազմակերպվում են միջոցառումներ, որոնց ծրագիրը կազմելիս առանձնապես բարձր դասարանցիները ակտիվ մասնակցություն են ունենում, ու հենց այստեղ էլ նկատվում է նրանց ստեղծագործական երևակայությունը: Ես իմ դասավանդման ընթացքում հաճախակի եմ աշակերտներին հանձնարարում փորձել ոտանավոր գրել, հաճախ բանաստեղծական որևէ տող եմ ասում որպես քառատողի առաջին տող և հանձնարարում շարունակել: Պատահում է՝ հետաքրքիր ոտանավորներ են ստացվում:

Բանավոր խոսքը կարելի է զարգացնել նույնիսկ ամենամեծերն ու անսպասելի հարցերի միջոցով: Իմիջիայլոց, առանձնապես միջին դասարանի սաները մեծ խանդավառությամբ են արձագանքում նման հարցերին: Օրինակ՝ ի՞նչ կլինեք, եթե քաղաքն սկսեր թռչել: Կարելի է նաև լուրջ հարցեր առաջարկել. օրինակ՝ ի՞նչ կլինի, եթե աշխարհում բևեռից բևեռ վերանա փողը:

Գնահատող և դատողական խոսք կառուցելու կարողության զարգացմանը մեծապես նպաստում են բանավեճերը, կլոր սեղանները, որոնց ժամանակ ստեղծվում է ազատ, անկաշկանդ մթնոլորտ՝ բնականաբար աշակերտներին մղելով սեփական մտքերը, կարծիքները, դատողություններն արտահայտելու:

Լեզուների ուսուցման գործընթացում կիրառվում են բազմազան տեխնոլոգիաներ և ժամանակակից մեթոդներ, որոնք խթանում են սովորողների ինքնուրույնությունը, քննադատական մտքի դրսևորումը, սոցիալական և հաղորդակցական, միջմշակութային և միջլեզվական կարողությունների զարգացումը: Անվերջ կարելի է պրպտել և հայտնաբերել գրավոր և բանավոր խոսքի զարգացման տարաբնույթ մեթոդներ ու միջոցներ: Նույն ուսուցիչը տարբեր դասարաններում ստիպված է լինում օգտագործել տարբեր մեթոդներ, որը բնական է և օրինաչափ: Հարգելի՛ գործընկերներ, ինչքան էլ խոսենք, միևնույն է, չենք կարող ավելի լավ ասել, քան մեծ մանկավարժ Դազարոս Աղայանը. «Ուսուցանել՝ կնշանակե սովորեցնել մի բան, իսկ կրթել՝ կնշանակե վարժել մի բանի մեջ կամ ամենցնել, զարգացնել այն գործությունը, որ արդեն կա անհատի մեջ»:

Տոնյա ՕՐԱՆՅԱՆ
Սպեի. Ա. Գրիբոյեդովի անվան հ. 3 միջն. դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի

որ լավ մանկավարժը նաև պետք է հոգեբան լինի. այս առումով հետաքրքիր է լսել Ձեր կարծիքը:

- Մանկավարժը հոգեբան լինելուց բացի պետք է օժտված լինի նաև մարդկային շատ որակներով, քանի որ նա ոչ միայն խոսքով է սովորեցնում, այլև իր կենսակերպով: Նա ոչ միայն հոգեբանորեն պետք է ճանաչի իր առջև նստած սաներին, այլև հսկի նրանց միջանձնային հարաբերությունները և ճիշտ ուղղորդի դրանք: Մարդկանց հետ հարաբերվելը ևս մշակույթ է, որն աշակերտների աչքի առաջ է, և ոչ միայն այս հարցում, այլև շատ ու շատ հարցերում նրանց համար ուսուցիչն է առաջին ուղեցույցը և իդեալը:

- Ձեր կարծիքով փոխվել է մանկավարժի կերպարը ժամանակակից փուլում, երբ նկատելի ձևավորությունների են ենթարկվել ուսուցմանն ու դաստիարակությանը, կրթական համակարգին ներկայացվող պահանջները:

- Անշուշտ, փոխվել են: Նախկինում ուսուցիչն անառարկելի հեղինակություն էր թե՛ երեխաների, թե՛ տան անդամների և թե՛ հասարակության մեջ: Ցավոք, այսօր նույնը չենք կարող պնդել: Օրինակ՝ ցավալի է, որ մանկավարժական բաժիններ քիչ շրջանավարտներ են դիմում, առանձնապես խուսափում են տղաներ: Գաղտնիք չէ, որ մեր դպրոցներում տղամարդ ուսուցիչների թիվը զգալիորեն

կրճատվել է, որը բացասաբար է անդրադառնում առանձնապես տղաների դաստիարակության և մասնագիտական կողմնորոշման հարցում: Եվ քանի որ մանկավարժի աշխատանքը բավականին բարդ է, շատերը երկնջում են և չեն ուզում ընկնել ավելորդ գլխացավանքի մեջ:

- Ո՞րն է մանկավարժի Ձեր կարգախոսը, որ ուղեցույց է Ձեզ գիտամանկավարժական գործունեության ամբողջ ընթացքում:

- Ամենից առաջ անհունորեն սիրել նրան, ում ուսուցանում ես: Սիրել այն առարկան, որը դասավանդում ես և ամենայն պատասխանատվությամբ վերաբերվել քո առաքելությանը և, որ ամենակարևորն է, ամեն օր լրացնել քո գիտելիքների զինանոցը: Եթե մի հրաշքով իմ կյանքի ամիվը հնարավոր լիներ ետ դարձնել, ես նորից կընտրեի մանկավարժի մասնագիտությունը:

- Ի՞նչ կմաղթեք Ձեր սաներին՝ ներկա և ապագա մանկավարժներին:

- Բոլոր ուսուցիչներին մաղթում եմ ծով համբերություն նրանց դժվարին աշխատանքում և անհուն սեր դեպի այս սրբազնագույն գործը, քանի որ «ուսուցիչ» բառը շատ մեծ և բարձր խորհուրդ ունի:

Նանե ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Լրագրություն, 3-րդ կուրս

Շնորհավորանք ԻՐ ԳՈՐԾԻ ՆՎԻՐՅԱԸ



«Յուրաքանչյուր գրագետ մարդ պարտական է ուսուցչին: Հզոր է այն ազգը, որն ունի լավագույն ուսուցչություն: Ծնողները տալիս են երեխային մարմին, իսկ ուսուցիչը՝ հոգի, բարի կամք և մարդկային բարձր իդեալներ»:

Ավ. Իսահակյան

Մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործում մեծ է Ստեփանակերտի Ե. Չարենցի անվան հ.7 հիմնական դպրոցի մաթեմատիկայի ուսուցչուհի Օֆելյա Պետրոսյանի ներդրումը: Աշխատանքային գործունեության ընթացքում նա իրեն դրսևորել է որպես սկզբունքային ու աշխատասեր, առարկային սիրահարված ու բարեխիղճ ուսուցչուհի: Ծնված լինելով մանկավարժների ընտանիքում՝ նա լավ գիտեր այդ մասնագիտության նրբություններն ու դժվարությունները, սակայն ոչինչ չէր կարող խոչընդոտ հանդիսանալ մասնագիտության ընտրության հարցում: Մի առիթով նա ասել է. «Եթե նորից կանգնեի մասնագիտության ընտրության առաջ, ապա նորից կընտրեի ուսուցչի մասնագիտությունը»: Այսպես են մտածում միայն նրանք, ովքեր սիրում են դպրոցը, աշակերտներին, դասավանդվող առարկան: Գերագույն հաճույքը ուսուցչի համար իր սաների հաջողություններն են:

Օֆելյա Պետրոսյանին հաճախակի կարելի է տեսնել աշակերտների հետ դժվարին խնդիրներ լուծելիս, սիրում է քննարկել լուծման տարբեր մեթոդներ, խորացնել նրանց գիտելիքները տարբեր մրցույթների մասնակցելու համար:

Ասումքս նու երգը նրա առօրյայի մի մասն են կազմում: Լինելով մաթեմատիկայի ուսուցչուհի՝ սիրում է ասումքել մեր դասականների ստեղծագործությունները: Նա ունի նաև երգելու շնորհք: Իր գեղեցիկ ծայրով հմայում է բոլորին: Կուլեկտիվը սրտանց շնորհավորում է ընկեր Պետրոսյանին՝ ծննդյան 60-ամյակի առիթով և մաղթում անսպառ եռանդ, քաջառողջություն և երկար-երկար տարիների կյանք:

Ստեփանակերտի Ե. Չարենցի անվան հ.7 հիմնական դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ՊԱՆՊԱՆՆԵՆ ԴԻՄՈՒՅՉԻ ԵՐԲԵՆՆԻ ՓԱՌԸ



Մեր ժողովրդի ջերմ վերաբերմունքը, սերն ու ակնածանքը մանկավարժի մասնագիտության հանդեպ գալիս է դարերի խորքից: Եվ պատահական չէ, որ մեզանից յուրաքանչյուրն իր կյանքում ունեցած ձեռքբերումների համար իրեն պարտական է զգում գիտելիքներ մատուցած մարդկանց՝ ուսուցիչներին:

Ուսուցչի մասնագիտական տոնը առիթ է՝ կրկին արժուրելու ուսուցչի դժվարին ու պատվաբեր աշխատանքը: Մեր գրուցակիցը Ասկերանի շրջանի Նախիջևանի գյուղի Գևորգ Հակոբյանի անվան միջնակարգ դպրոցի պատմության ուսուցիչ Լրեն ՍԱՐՈՒՆՅԱՆԵՆ է:

Չատ են հարկավոր լինելու նրանց: - Ձեր կարծիքով ինչպիսի՞ն պետք է լինեն ուսուցիչ-աշակերտ հարաբերությունները:

- Ներկայումս աշակերտների մի մասն ավելի մոտ հարաբերություններ է ձգտում ունենալ ուսուցիչների հետ, սակայն մտածում են այդ կերպ խուսափել պատասխանատվությունից, դասերը սովորելուց: Կարծում եմ՝ ուսուցիչներին պարտականությունն է նրանց մոտ զարգացնել պահանջարկված աշխատանք, ինքնապատրաստություն, որպեսզի դպրոցն ավարտելուց հետո հաստատուն քայլերով մտնեն նոր կյանք:

Միաժամանակ աշակերտի հետ կարևոր է ստեղծել փոխադարձ հարգանքի և վստահության մթնոլորտ: Նա քո մեջ պետք է տեսնի և ուսուցչին, և հավատարիմ ընկերոջը: Ամենակարևորը համարում եմ այն, որ ուսուցիչը պետք է անձնական օրինակ ծառայի իր աշակերտներին, սիրի նրանց և դասավանդած առարկան:

- Ի՞նչ խնդիրներ եք տեսնում կրթության ասպարեզում:

թության ասպարեզում:

- Իմ կարծիքով՝ որոշ առարկաների դասավանդումը չի համապատասխանում երեխաների տարիքին: Օրինակ՝ պատմություն առարկան սկսում են ուսումնասիրել 6-րդ դասարանից, և երեխաները չեն կարողանում լավ ընկալել լսածը: Աշակերտների փոքր թվաքանակ ունեցող դպրոցների ավագ դասարանները հնարավորություն չունեն հոսքային կրթություն ստանալ, ինչն ազդում է հետագայում բարձրորակ մասնագետներ ունենալու:

Ցավոք, այսօր ուսուցչի մասնագիտությունն ընտրում են հիմնականում միջին մակարդակի գիտելիքներով շրջանավարտները, իհարկե, լինում են նաև բացառություններ: Մեր հանրապետությունում միշտ էլ բնագիտական առարկաների ուսուցիչների պակաս է զգացվում:

Ուզում եմ շեշտել, որ 12-ամյա կրթությունն ինչ-որ տեղ տղաներին գրկում է իրենց հասակակիցների հետ սերտ շփումից, կրթությունը պատշաճ մակարդակով շարունակելուց: Ավարտելով դպրոցը՝ նրանք անմիջապես անցնում են ծառայության, և նրանց մեջ կորչում է ուսման հանդեպ հետաքրքրությունը, իսկ երբ գորաքովում են, այլևս չեն խորանում ուսման մեջ:

Ասեմ, որ մեր ուսուցիչների մեծ մասին, իհարկե, մտահոգում է ցածր աշխատավարձը:

- Ի՞նչ կասեիք ձեր ուսուցչական կոլեկտիվի մասին:

- Ուրախությամբ նշեմ, որ մեր կոլեկտիվը, շնորհիվ դպրոցի տնօրեն Գալինա Մեծլումյանի, որն արդարացի, օրինապահ և ազնիվ անձնավոր

ություն է, շատ համերաշխ ու միահանու է: Կոլեկտիվի մեծամասնությունը երիտասարդ մասնագետներ են, բոլորն էլ պատասխանատվությամբ են նվիրված իրենց դժվարին, բայց պատվաբեր աշխատանքին: Աշխատում ենք անել ամեն ինչ, որ ուսման և դաստիարակության որակը պահենք բարձր հիմքերի վրա: Ասեմ, որ մեր դպրոցում դասավանդում են յոթ տղամարդ ուսուցիչներ, ինչը կարևոր են համարում երեխաների դաստիարակության համար:

- Ապրում եք գյուղում, իհարկե, դժվարություններ կլինեն...

- Անշուշտ, այդպես է: Ցավոք, միայն աշխատավարձով հնարավոր չէ ընտանիքի հարցերը հոգալ, և ստիպված եմ գաղվել նաև գյուղատնտեսական աշխատանքներով, որն ամուսնի մեծ սիրով ու հաճույքով: Աշխատում եմ հողի հետ, ցանկանում բերք ու բարիք ստեղծել և մեծ բավականություն եմ զգում, երբ հայրենի գյուղս բարգավաճ են տեսնում: Իսկ դա ամեն ինչից վեր է ինձ համար:

Երբևէ չեմ մտածել հեռանալ իմ հարազատ գյուղից, քանի որ ամեն մարդ պետք է արմատներ գցի իր մայր հողում, և այդ ոգով էլ դաստիարակում են իմ աշակերտներին, նույնը կսերմանեն և իմ երեխաների մեջ:

Մեր ուսուցիչներին մաղթում եմ ապագայի հանդեպ լավատեսություն: Աշխատե՛ք այնպես անել, որ միշտ մնանք մեր կոչման բարձրության վրա՝ պահպանելով ուսուցչի երբեմնի փառքը:

Կարինե ԲԱՍՇԵՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ-150

ՄԵՁ ԾԱՆՈՑ ԵՎ ԱՆԾԱՆՈՑ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ

Մեկնաբանում է գրականագետ Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆԸ



րադյանի հետ: Մեզ հետաքրքրում էր, թե 150 տարի անց մենք լավ ենք ճանաչում թուրքական ժողովրդին: Ձրույցը մասնավորապես ծավալվեց նրա «Ամբուն կյուն» ստեղծագործության շուրջ:

Նվարդ Թումանյանի նույն «Հուշեր»-ում կարդում ենք, որ հայրը իրենց պատվիրել է չհրատարակել իր անավարտ գործերը, վառել: Բայց «Ամբուն կյուն», որ անավարտ է, պահպանվել է և տպագրվել է շատ տարիներ անց: Սամվել Մուրադյանն այդ առնչությամբ պատմեց հետևյալը.

«ԱՆՐՈՒՆ ԿԿՈՒՆ»

- «Ամբուն կյուն» թուրքական վերջին գործերից է: Այն «Չարի վերջը» ստեղծագործության ընդարձակ տարբերակն է, որի երկրորդ մասը ոչ մեկը չէր համոզվում տպագրել: Թումանյանի գործերի մեծ մասի լավագույն հրատարակիչ, նվիրյալ թումանյանագետ, ծեռագրագետ, բնագրագետ, հզոր բանասեր Արամ Ինճիկյանը «Ամբուն կյուն» ստեղծագործության գրության ճիշտ տարեթիվը չի նշել, բայց ասում է, որ գրվել է 1917 թվականից առաջ, հավանաբար՝ 1915թ.: Ես, իհարկե, գիտեմ երբ է գրվել, բայց ըստ երևույթին վախճանել էր գրել ճիշտ տարեթիվը. չէր ուզում կապել Հոկտեմբերյան հեղափոխության, Խորհրդային Միության կազմավորման շրջանում՝ 1922թ.: Գրողի մեթոդավորները գիտեին ինչի մասին է: Դրա համար աղջիկը՝ Ալիսանը, ստեղծագործությունն իր ծեռագրով նույն թանաքով արտագրել էր մեծ սև տետրի մեջ, որպեսզի հոր ծեռագրով չպահվի: Թումանյանի ծեռագիրը չի պահպանվել, ինչ-ինչ հանգամանքներում կորել է: Ո՛վ է կորցրել՝ ոչ ոք չգիտի: Որովհետև վախճանել են թումանյանին վնաս տալ: Ես և Էդ. Ջրբաշյանը ենք «Ամբուն կյուն» 1972թ. առաջին անգամ տպագրել «Բանբեր Երևանի համալսարանի» համոզմամբ: Նոր էի այդտեղ մտել աշխատանքի, պատասխանատու քարտուղարն էի, երբ Ինճիկյանը բերեց այդ ստեղծագործության ծեռագիրը (Ալիսանի ծեռքով գրված): Նա ու հանդեսի գլխավոր իմ խմբագիր Էդ. Ջրբաշյանը՝ երկու մեծ թումանյանագետներ, խորհրդակցում էին՝ ինչպես տպագրել: Վախճանում էին գլավիտից, և նրանց վախճան տետրի չէր: Գլավիտն անմիջապես նկատել էր, որ դա խորհրդային պետության դեմ է ուղղված, քանի որ այնտեղ շատ վտանգավոր արտահայտություններ կային: Առհասարակ նրանում գեղարվեստական պատկերը շատ է բազմատարողունակ, բազմանշանակ, մանավանդ ակնարկները շատ թափանցիկ են, և իսկույն կարող են վերագրել այսինչին կամ այնինչին:

Ես էի տպարանի հետ անմիջական կապը պահողը: Էդ. Ջրբաշյանը Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամ էր, մի ոտը կտրած էր, մի ոտըն էլ 14 տեղից վիրավոր, չէր կարող գնալ-գալ, ես էի հանդիպում ունենում այդ օրերի տպագրատան ղեկավարության հետ, ընդհուպ մինչև Կենտրոն: «Ամբուն կյուն» տպեցինք կրճատումներով: Ստիպված կրճատեցինք, քանի որ գլավիտը, այնուամենայնիվ, հասկացել էր, թե ինչ է գրված: Իսկ ի՞նչ էին կրճատել: Գրվածքում ասվում է, որ աղվեսը կանչեց կկվին (նկատի ունենանք՝ աղվեսը Լենինն է, կկուն՝ հայ ժողովուրդը), թե գնա հավար գոգի, որ հեղափոխություն ենք անելու, ես էլ հրեա

գալիս եմ: Նկատի ունի հայ հեղափոխականներին: Մերոնք, չէ՞, գնացին հեղափոխություն արեցին և առաջին հարվածը վերցրին իրենց վրա: Հետո ասում է, երբ հեղափոխությունը հաղթանակեց, աղվեսը խոսեց ժողովուրդների երբայրությունից, բարեկամությունից, սկսեցին համբուրվել շուրջ կատվի հետ, կատուն մկան հետ, աղվեսը աքլորի հետ և համբուրվելիս մեկի գլուխը մնաց մեկելի բերնում: Մեկն էլ բողբոջում է, թե համբուրվելիս շրթունքը կծել են: Թումանյանը հասկացել էր, թե ինչ է կատարվում: Հասկացել էր, որ եթե համբուրվելիս մեկի գլուխը մնում է մեկի բերանում, նշանակում է՝ Հայաստանը և Ադրբեջանը երբ համբուրվում են, Դարաբաղը և Նախիջևանը մնում են Ադրբեջանի բերանում, Հայաստանը և Թուրքիան որ համբուրվում են, ամբողջ Արևմտյան Հայաստանը մնում է Թուրքիայի բերանում: Սա է գլխավոր միտքը: Թումանյանական այս պատկերները խոր իմաստ ունեն: Այսպիսի հատված կա. կենդանիներից մեկը աղվեսին հարցնում է՝ բայց չէ՞ որ դուք ասում եք ազատություն է և հավասարություն: Աղվեսը պատասխանում է նրան՝ «...ազատություն է ամենքի համար, բայց ոչ բեզ համար: Եթե ամեն մեկն առանձին-առանձին իրեն ազատ զգա, գիտե՞ս որամից ինչ դուրս կգա»: Այս հատվածն էլ հանեցին այն ժամանակ: Էլի բաներ կան, որ հանեցին, այս պահին կարող է չհիշեմ, տասնամյակներ են անցել:

Ստեղծագործությունը թումանյանը դիտմամբ է գրել կենդանական հերոսներով, որ կարողանա կենդանիներին վերագրել իր մտածողությունը, ինչ որ ինքը մտածում էր, կենդանիների անունից է ասել: Բայց նույնիսկ այդ պայմաններում էլ վտանգը կար, և «Ամբուն կյուն» տպագրվեց այն ժամանակ այդ կտորները հանած: Կկուն հայ ժողովուրդն է, որի ձագերին տարել կերել են գայլերը, այսինքն՝ բոլշևիկները և թուրքերը: Խլել են երկիրը, մնացել է անբուն, հայրենիքից՝ Արևմտյան Հայաստանից, Դարաբաղից, Նախիջևանից, Ջավախքից գրկել են: Դրա համար էլ վերագրել է «Ամբուն կյուն»: Թումանյանական համարը հենց այդտեղ է: Ես հիշում եմ, որ Ջրբաշյանն ու Ինճիկյանը երբ խոսում էին, չէին ուզում, որ ես լսեմ, իմ ներկայությամբ քարձածայն այդ մասին չէին խոսում: Ես երիտասարդ էի, մտածում էին, որ իմ ներկայությամբ չի կարելի խոսել այդ մասին: Բայց իրար ասում էին՝ տես է, թումանյանը ինչ հանձնարեղ բան է գրել: Բայց չէին բացում, թե որն է այդ հանձնարը: Ես էլ լսում էի: Տարիներ հետո վերլուծում էի, թե ինչ նկատի ունեին «Թումանյանի հանձնարը» ասելով:

«Ամբուն կյուն» ստեղծագործության մասին առաջին ուսումնասիրությունը հենց Արամ Ինճիկյանն է գրել: Դրանից հետո գրել է Էդվարդ Ջրբաշյանը իր մեկնաբանություններով, հետո՝ Հրանտ Թամրազյանը: Վերջինս գիտեր, որ տարան ուղարկած ծեռագիրն ինձ մոտ է պահվելու, տեսնելու են բոլորովին ուրիշ բան... գրվածքներն դեռ լավ չեն կարդացել, տեսել..., և ոչ ոք ուղիղ չի գտնելու, չի ասելու երբեք» (Նվարդ Թումանյան, «Հուշեր և գրույցներ»):

Իսկ ակնավոր թումանյանագետ Էդ. Ջրբաշյանը «Գրական թերթի» 1989թ. մարտի 11-ի համարում տպագրված իր մի հոդվածում գրել է, որ մինչև վերջերս մեր գիտական-գրական կյանքում իշխող «վերապահումների և մտավախության» հոգեբանությունը մեզ հաճախ ստիպել է առայժմ ընթերցողից թաքցնել բանաստեղծի ժառանգության առանձին էջեր՝ նրա վրա «սովոր չենտելու» նկատառումներով:

Վերջերս առիթ ունեցանք գրուցելու ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի ղեկան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Մուրադյանի հետ: Մեզ հետաքրքրում էր, թե 150 տարի անց մենք լավ ենք ճանաչում թուրքական ժողովրդին: Ձրույցը մասնավորապես ծավալվեց նրա «Ամբուն կյուն» ստեղծագործության շուրջ:

րով, հետո՝ Հրանտ Թամրազյանը: Վերջինս գիտեր, որ տարան ուղարկած ծեռագիրն ինձ մոտ է պահվում: Մահվանից առաջ ուզեց, տվեցի, բայց զավակները այն չվերադարձրին նրա մահվանից հետո: Ես այնտեղ նշումներ ունեի, տարան ու այդպես էլ չբերեցին:

Երանցից հետո ես գրեցի, մեկնաբանեցի «Ամբուն կյուն» իմ «Գրական հանգրվանների» 3-րդ գրքում: «Հովհաննես Թումանյան. հանձնարը Յեղասպանության միջով» ուսումնասիրությունը «Գրական հանգրվաններ»-ից մեկն է: «Ամբուն կյուն» վերլուծել են որպես եղեռնի և հետագա ընթացքը պատկերող գեղարվեստական ստեղծագործություն: Թումանյանի 150-ամյակի առիթով ես նորից հնարավորություն ունեցա կատարել ճշտումներ: Ինչքան էլ ազատ մտածողության տեր լինեմք, ինչքան էլ ասենք՝ ազատություն է եկել, ազատ խոսքի իրավունք կա, իմ մեջ դեռ հին ժամանակներից գլավիտի մտածողությունը կա: Մտածում էի՝ սա որ գրեմ, ինչպե՞ս կընկալեն, ի՞նչ կլինի, ինչպե՞ս կհասկանան ինձ: Համենայն դեպս, աստիճանաբար եմ մաքրում այդ բանը և 2010թ. գրածիս վրա նոր ավելացումներ եմ արել ու հիմա էլ առանձին ուսումնասիրություն եմ պատրաստել: Չգիտեմ որտեղ կտպագրեն:

Լևոն Հախվերդյանը ամենամեծ թումանյանագետներից է, Թումանյանին սիրող, գնահատողներից մեկը: Այդպիսի տպավորություն ունեն չառելը: Բայց «Հայ դասական գրողներ» մատենաշարով նրա կազմած Թումանյանի միաստորակում գրողի հանրահայտ քառյակներից մեկը՝ «Երկու դարի արանքում, երկու քարի արանքում, Հոգնել եմ նոր ընկերի ու Հին ցարի արանքում» աղավաղված է տպել: «Ցարի» փոխարեն «ցավ» է գրել, որ հանկարծ «բոլշևիկ» և «ցար» հակադրությունը չստեղծվի: Տեսեք մի տառի փոփոխությամբ Հախվերդյանը ինչ կեղծիք է արել, ոնց է այլանդակել թումանյանի հանձնարեղ միտքը: Այնպես որ թումանյանագիտությունը հիմա հանձնատաբար ազատ զարգանալու և լավ մակարդակի հնարավորություններ ունի: Երրորդ տարին է՝ ընթանում է Թումանյանի տասնատորյակի ակադեմիական հրատարակությունը: Ես էլ կամ խմբագրակազմում: Արդեն երեք հատոր հրատարակվել է, 4-րդը աշնանը կիրառատարակվի, ու այսպես կշարունակվի:

ՄԻ ԵՐԳԻ ՊԱՏՈՒՄԻՅԱՆԻ

Դարձյալ փայլեց Սասնո գլխին Ազատության դրոշակ, Կեցցե Հայրենիք գոչելով Բարձրագրին աղաղակ: Թնդաց, որոտաց ծայրերից Ողջ աշխարհը Հայկական, Խունք-խունք կզան հայ զավակներ, Հայրենիքի օգնության:


Գուրգեն, Վահան, Հրայր Դժոխք, Քաջ Անդրանիկ ղեկավար, Տավրոհիկի լեռներումը Շրջում էին անդադար: Սարափեցին թուրք ցեղերը Մինչ պալատը Սուլթանի, Հրամայեց շուտ կործանել Դիրքերը հայրուկների: Մի անգուր մեր թշնամին... Սարափեցի տեսարան. - «Ժամանակն է վրեժ լուծել», - Գոչեց ծայրը հայկական: Կրակ տեղաց հայ քաջերի Բնակավայր դիրքերից, Տապալվեցավ թուրք խուժանը Ահռելի գնդակներից:

Ֆիդայական այս երգը քաջածանոթ է բոլորին: Ո՛ւմ մտքով կանցնի, որ նրա հեղինակը Հովհաննես Թումանյանն է: Բայց պրոֆեսոր Սամվել Մուրադյանը դա կռահել է: Ինչպե՞ս, ի՞նչ է հիմք ունի այդպես մտածելու:

Գիտնականը պատմեց, որ երբ 1960-ական թվականներից սկսեց լուրջ ուսումնասիրել Թումանյանի ստեղծագործությունները, այդ վարկածը կար իր մոտ: - Դա ոչ թե ազգագրական երգ է, ինչպես ներկայացվում է, այլ ազգային երգ: «Կրակ տեղաց հայ քաջերի բնակավայր (կամ բնակարան) դիրքերից: Մա հանձնարեղ պատկեր է: Մա նշանակում է, որ հայ քաջերի բնակարանը դիրքն է: Արցախյան պատերազմն էլ ցույց տվեց դա: Սահմանում կանգնած մեր տղաների դիրքը նրանց բնակարանն է, նրանց ապրելու և մեռնելու տեղն է: Թող մահը հեռու լինի նրանցից, թող ապրեն հավիտենապես:

Այդ երգը ժամանակին արգելված էր, չէր կարելի ոչ երգել, ոչ լսել: 2010թ., երբ Թումանյանի ուսումնասիրությունն էի կատարում, մտքովս նորից անցավ այդ երգը, ասի նայեմ Ավարդ Դազիլյանի կազմած «Հայ ռազմի և զինվորի երգեր» ժողովածուն, տեսնեմ այնտեղ այս երգի տեքստը ինչպես է մեկնաբանված: Տեսա, որ այնտեղ մեկնաբանություն չկա: Ուղղակի ամիսյտ հեղինակի գործ է: Հետո վերցրի Թումանյանի ակադեմիական հրատարակության նախորդ տարբերակը: Այնտեղ կա 1904թ. Թումանյանի «Էքսպրոմտ» վերնագրով մի բանաստեղծություն: Տեսա, որ այն շատ նման է «Դարձյալ փայլեց»-ին: Ասացի՝ սա նույն մտածողությունն էր մարդը պիտի գրած լինի: Սկզբում կասկածում էի, հետո երբ խորացա, բացահայտեցի կասկածիս հիմքերը: Վերցրի ակադեմիական հրատարակության առաջին հատուկը: Նայեցի ծանոթագրություններին: Այնտեղ գրված է. «Դարձյալ փայլեց Սասնո գլխին Ազատության դրոշակ, Կեցցե Հայրենիք գոչելով Բարձրագրին աղաղակ...»: Ներկայացված է որպես նույն երգի տեքստային տարբերակ: Վերցրի 1904թ. գրած «Էքսպրոմտ» բանաստեղծությունը, ուզեցի սրա ստեղծագործական պատմությունը ճշտել և ի՞նչ պարզեցի: Պարզեցի, որ թումանյանագիտությունը պարզել էր արդեն, բայց չէր մեկնաբանել, այսինքն՝ մատնացույց է անում, բայց չի ասում՝ ինչ է: Դե հիմա ես ասեմ ինչը ինչպես է:

1904թ. հունիսի 29-ին Օշական գյուղում տոնվում է Թարգմանչաց տոնը: Այդ տարի Թարգմանչաց տոնը նշել են հունիսի 29-ին: Սովորաբար աշնանն են նշում: Տոնին ներկա է եղել Թումանյանը: Իսկ 1904-ը ինչո՞վ էր նշանավոր. Սասունի հերոսական դեպքերով ու ջարդերով: Սկզբում մերոնք կարողանում էին ետ մղել թուրք-թուրքական հարձակումները: Այնտեղ այդ շրջանում հերոսացան Գևորգ Չաուշը և մյուսները, Անդրանիկն արդեն վարուց հերոս էր: Իսկական հերոսության ժա-



մանակ էր: Եվ այդ լուրերը գալիս-հասնում էին Արևելյան Հայաստան: Դեռ Սասունի մեծ ջարդերը չէին սկսվել: Այսինքն՝ դեռ մեր հաղթանակների շրջանն էր: Երբ որ թուրքական պետությունը արդեն իր կանոնավոր զորաբանակներն ուղարկեց ապստամբ սասունցիներին ճնշելու, դրանից հետո եղան ջարդերը, Սասունի կոտորածները 1904 թվականի ամռան և աշնան ամիսներին: Բայց մինչև հունիսի 29-ը գալիս էին հաղթական լուրեր: «Երբ այդ տեքստի մեջ կարդացի՞ «Գուրգեն, Վահան, Հրայր Դժոխք, Քաջ Անդրանիկ ղեկավար, Տավրոհիկի լեռներումը շրջում էին անդադար», հասկացա, որ սա անմիջապես կապվում է այդ իրադարձությունների հետ: Այսինքն՝ սա դեռ հաղթանակների շրջանն է, դեռ անվախ կռվում են, հաղթում են, և այդ լուրերը գալիս են Արևելյան Հայաստան: Թումանյանը, դրանից ոգևորված, գրում է այս բանաստեղծությունը՝ «Դարձյալ փայլեց»-ով սկսվող: Թարգմանչաց տոնին կարողում է ներկաների առաջ: Բոլորը ոգևորվում են, Թումանյանի ծեռքից խլում են ծեռագիրը: Խլում-տանում են: Միայն օշականցի մի մարդ՝ Հայկ Առաքելյան անուն-ազգանունով, որ գրագետ մարդ է եղել այդ գյուղում, ասել է՝ ծեռագիրը տանում եք տարեք, բայց թողեք արտագրենք: Այն պահպանվել է Հայկ Առաքելյանի ընդօրինակությամբ, որը Թումանյանի տուն-թանգարանում չկա հիմա: Եղել է, հիմա չկա, ես տեսել եմ այդ ծեռագիրը: Բայց երբ գնացի, որ այդ ծեռագիրը օգտագործեմ՝ ուսումնասիրությունս գրելու համար, թանգարանում ասացին, որ Թումանյանի թոռնուհին՝ Իրմա Սաֆարբեկյանը, տարել է՝ ասելով, որ պիտի վաճառի, որպեսզի Թումանյանի Թիֆլիսի տունը գնի: Ու այդպես էլ չեն վերադարձրել: Այդպես էլ մենք Թումանյանից դեռևս մատուցեցին ունենք պահված մասնավոր մարդկանց հավաքածուներով:

Ժողովուրդը չգիտի Թումանյան: Թվում է՝ ամենամասայական, ամենատարածված հեղինակն է, որին բոլորը պիտի իմանան: Կարծես թե այդպես էլ կա: Բայց այդպես չէ: Ո՛վ գիտի այսօր Թումանյանի հրապարակախոսական հոդվածները ինչ արժեք ունեն: 1914-1915թթ. գրել է հրապարակախոսական հոդվածներ: Թումանյանը երկու անգամ գնացել է Արևմտյան Հայաստան: Այս փաստը շատերը գիտեն: Բայց ի՞նչ է արել այնտեղ, ի՞նչ է տեսել, հայտնի չէ:

Ամենայն հայրը բանաստեղծի 150-ամյա հոբելյանը ևս մի առիթ է առնչվելու թումանյանական մեծ, անասհման գեղարվեստական աշխարհին, խորանալու հանձնարեղ բանաստեղծի ստեղծագործության մեջ և նորանոր գաղտնիքներ բացահայտել:

Ներկայացրեց Սվետլանա ԽԱՉԱՏՐՅԱՆԸ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՎԵՍՏԱԿԱՐ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԱՐՏԱՐՎԵՍՏԵ ԱՆՆԱՄԱՏԵՂԵԼԻ ԵՆ



տարվեստի գաղափարներն ու վնասակար սովորություններն իրար հետ չեն համատեղվում:

Սպորտը եւ ֆիզիկական ակտիվությունը շատ կարևոր են առողջության եւ երիտասարդ մնալու համար, բայց համատեղությամբ այնպիսի վնասակար սովորությունների հետ, ինչպիսին են ոգելից խմիչքները, ծխելը, վեճերի ու կռիվների մեջ ընկնելու հակումը, դրանցից ստացած արդյունքը կարող է ամենեւին ուրիշ լինել: Մարզադասիչը մտածում ակտիվ պարասպորտից հետո շատերն իրենց չեն զրկում, օրինակ, սառը գարեջուր խմելու կամ ծխախոտ ծխելու հաճույքից: Իսկ ինչո՞ւ: Եվ այսպես, ինչո՞ւ է պետք հրաժարվել վնասակար սովորություններից, հատկապես ակտիվ սպորտով եւ մարտարվեստով պարասպորտից: Թեմային անդրադարձանք մարզական կարասե դո ֆեդերացիայի մարզիչ Տիգրան ԳԵՎՈՐԳՅԱՆԻ հետ հետաքրքիր զրույցում, որի ժամանակ համոզվեցինք, որ մարտարվեստի գաղափարներն ու վնասակար սովորություններն իրար հետ չեն համատեղվում:

- Կարծիք կա, որ ալկոհոլի եւ միկրոսիմի օգտագործումից ստացած վնասը կարելի է փոխհատուցել սպորտի միջոցով: Որքանո՞վ է դա ճիշտ եւ ի՞նչ հետևանքներ կարող է ունենալ:

- Տարածված կարծիք է, թե իբր այն օգտակարությունը, որը տալիս է սպորտը, հեշտությամբ կարող է ծածկել կամ փոխհատուցել այն վնասը, որը հասցնում են վատ սովորությունները: Մինչդեռ այդ ենթադրությանը հիմնվել չի կարելի ոչ մի դեպքում: Ալկոհոլի եւ միկրոսիմի ընդունումն առողջությանը կործանարար են ազդում, անկախ նրանից, թե ինչ մարզածեղով ես պարասպորտով կամ զբաղվում ես սպորտով ընդհանրապես: Ապիրտային խմիչքների եւ ծխախոտի մեջ պարունակվող նյութերն ու բաղադրիչները թունավոր են օրգանիզմի համար: Զե՞ որ մենք չենք բուժում, օրինակ, անորակ սննդից ստացած թունավորումը սպորտով, հետեւապես ինչպե՞ս կարելի է փոխհատուցել վնասակար սովորությունների կործանիչ ազդեցությունը սպորտի միջոցով: Հաճախ էլ լսում ենք, թե այս մեկը կամ այն մեկն ապրել է երկար տարիներ, բայց ամբողջ կյանքում ծխել կամ խմել է: Իսկ ես մնան դեպքում ավելացնում եմ՝ բա պատկերացրեք ինչքան ավելի երկար կապրեք, եթե չծխեք կամ չխմեք:

- Իսկ մարզիկի համար կա՞, արդյոք, թուլատրելի չափ, որը չանցնելու դեպքում կարող է եւ վնաս չտալ ինքն իրեն:

- Կախված է տվյալ մարզիկից եւ նրանից, թե ինչ նպատակով է հաճախում պարասպորտը:

մուսուկները: Եթե խոսենք մարտարվեստի գաղափարների մասին, որը ներառում է նախ եւ առաջ առողջ ապրելակերպ ու մտքի, շնչառության, մարմնի ներդաշնակություն, որտեղ կարելու է, որ մարզիկը ճանաչի ինքն իրեն ու իր օրգանիզմը, ապա ընդհանրապես բացառվում է ոգելից խմիչք, ծխախոտ, վնասակար սնունդ օգտագործելը, փոխարենը՝ ճիշտ սննդակարգ, ճիշտ քուն, առողջ միտք եւ մարմին: Բայց դա կատարվում է ոչ թե ստիպողաբար, այլ մարտարվեստի սկզբունքներին համաձայն, մարզվողն ինքն է հասնում առողջ մարմնում առողջ ոգի ունենալու գաղափարին: Իհարկե, սկսնակների համար դեռեւս անհասկանալի են այդ գաղափարները: Պատահում է, որ դիմում են պարասպորտի գալու համար, բայց գտնվում են իրենց իսկ վատ սովորությունների ճնշման տակ: Մենք՝ մարզիչներս, փորձում ենք մարզիկի մեջ մտցնել առողջ ապրելու գաղափար: Դրա համար լավագույն հիմք է մարզիչի անձնական օրինակը: Ինքս չեմ ծխում, ոչ էլ սպիրտային խմիչքներ եմ օգտագործում: Մարզիչի ու մարզիկի համատեղ ջանքերով հաղթահարվում են վատ սովորությունները: Բայց եթե, այնուամենայնիվ, չի հաջողվում, ուրեմն տվյալ մարզիկը տվյալ մարտարվեստի համար չէ, ոչ էլ մարտարվեստն է նրա համար: Թուլատրելի չափն անհատական է ցանկացած մարդու համար. օրվա մեջ օգտագործվող մեկ բաժակի չափ սպիրտային խմիչքը ոչ մեկին հակացուցված չէ, կարելու է՝ ինչո՞ւ ես դա անում: Ծանր օրվա վերջում՝ ռելաքս գուցե: Մարտարվեստներում խորացած մարդու համար ակնհայտ է, որ վատ սովորությունների մեջ հաճույք գտնելն սկզբունքայնորեն հակասում է մեր գաղափարներին, իսկ մարզիչի համար առավել եւս անթույլատրելի է իր ուղուն հակառակ գնալը:

տարվեստներում խորացած մարդու համար ակնհայտ է, որ վատ սովորությունների մեջ հաճույք գտնելն սկզբունքայնորեն հակասում է մեր գաղափարներին, իսկ մարզիչի համար առավել եւս անթույլատրելի է իր ուղուն հակառակ գնալը:

- Իսկ եթե մարտարվեստի սկզբունքներից չի հետևող, բայց որեւէ մարզածեղով կոփվող մարդը չի հրաժարվում իր վնասակար հաճույքներից, ինչպե՞ս է դա անդրադառնում նրա օրգանիզմի ու պարասպորտի վրա:

- Եթե մարզիկը պրոֆեսիոնալ սպորտով է զբաղվում ու միաժամանակ չարաշահում է վնասակար հաճույքները, նա ենթագիտակցորեն հասկանում է, որ ինքը առողջ կյանքի չենալու չէ, որքան էլ մարզական հաջողություններ ունենա, չի կարող օրինակ ծառայել ուրիշների համար: Ցանկացած մարզիկ պետք է լավ իմանա իր օրգանների կառուցվածքը, ինչպես արդեն նշել եմ, ճանաչի թե՛ ֆիզիկական եւ թե՛ հոգեւոր, մտավոր իր կողմերը: Հետեւապես պետք է գիտակցի, թե ինչ կարող է կատարվել իր հետ, եթե գերծ չմնա վատ սովորություններից: Մեր օրգանիզմի վրա բացասաբար կարող է անդրադառնալ նույնիսկ չնչին քանակի էթանոլը, որը մտնում է մեր մեջ սպիրտային խմիչքների հետ: Ալկոհոլի ընդունումից իսկույն արագանում են սրտի խփոցները, սիրտն ստանում է կրկնակի ծանրաբեռնվածություն: Եթե դա հաճախակի բնույթ ունի, եւ միաժամանակ պարասպորտներ կան, ապա սրտին հասցվող ծանրաբեռնվածությունը երաշխավորված է, որին հետեւում են մեծ խնդիրներ՝ կապված սրտի եւ անոթների հետ: Անխուսափելի են ստամոքսի եւ լյարդի խնդիրները այդ սովորությունը չարաշահելու դեպքում: Ծխող մարդու մոտ տուժում են առաջին հերթին թոքերը: Շնչառական ուղիները նեղանում են, որի հետեւանքով առաջանում են շնչառության հետ կապված խնդիրներ: Մարզիկը, որը ծխում է, չի ստանում անհրաժեշտ քանակությամբ թթվածին պարասպորտի ժամանակ: Դրանից տուժում է ամբողջ օրգանիզմը՝ ուղեղը, թոքերը, սիրտը, արյունը, բջիջները չեն հագնում անհրաժեշտ թթվածնով: Ծխող մարզիկներն ավելի շուտ են հոգնում եւ վնասվածքներ ստանում: Եթե կարելու է սեփական առողջությունը եւ մարզուններից ստացվող լավ

արդյունքը, ուրեմն պետք է գիտակցաբար գերծ մնալ վնասակար սովորություններից:

- Խոսելով վնասակար սովորությունների մասին՝ չորացնե՞ք նաեւ մարդկանց այն վատ սովորությունները, ինչպիսին են, օրինակ, վեճերի ու կռիվների մեջ կամ վատ շրջապատ ընկնելու հակումը, ինչը հատուկ է հատկապես դեռահասներին: Արդյո՞ք մարտարվեստի պարասպորտները նպաստում են ձերբազատվելու այդ սովորություններից:

- Այո, եթե մարզիկը հասնում է այն մակարդակին, որտեղ գործում է գիտակցված ինքնահսկումը: Մարտարվեստի պարասպորտները սուկ դասեր չեն, դրանք կյանքի ուղի են, որն անցնում են ամբողջ կյանքում՝ սկսելով ինքնաճանաչումից, շարունակելով մտքերի, հույզերի, շարժման ինքնակառավարումից, անընդհատ ձգտելով դեպի ինքնակատարելագործում: Մարտարվեստն իրար խփելը չէ, այլ՝ հոգու եւ մարմնի ներդաշնակությունը ճիշտ շնչառության եւ ֆիզիկական շարժումների միջոցով: Պարասպորտի մթնոլորտում դաստիարակվող, ճիշտ շնչելու եւ արտաշնչելու արդյունքը գիտակցող մարզիկը ազատվում է բացասական հույզերից, հանգստանում, իսկ վեճերն ու կռիվները, վատ շրջապատն անհարիր են դառնում իրեն: Շատ օրինակներ կարող են բերել, երբ ոչ միայն դեռահասները, այլեւ հասուն տարիքի մարդիկ կարողացել են փոխել իրենց դեպի լավ եւ վերագտնել առողջ ապրելու ձեւը մարտարվեստի միջոցով: Ցանկացած մարզածեղ մարզիկի մեջ ձեւավորում է այդ մարզածեղի ֆիզիկական ու տեխնիկական համակարգին համապատասխան բնավորություն: Եվ գալիս է մի պահ, երբ մեր ներքին աշխարհն ու ֆիզիկականը համապատասխանում են կամ չեն համապատասխանում տվյալ մարզածեղին: Մարզիչը եւ մարզիկը պետք է տիրապետեն մարդու կառուցվածքի մասին գիտելիքների եւ բժշկական որոշ գիտելիքներ ունենան, որպեսզի տարիներ հետո չբախվեն վատ առողջության խնդիրների:

Ուրեմն՝ կատարելագործե՞ք մեզ՝ զբաղվելով ֆիզիկական ակտիվությամբ, մարտարվեստներով, հետեւելով սկզբունքներին ու գերծ մնալ վնասակար սովորություններից:

ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ԱՐՑԱԽԻ ԲԱՅ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Վերջին տարիներին Արցախում ակտիվացել է մարզական կյանքը, մասնավորապես, պետության կողմից վարված քաղաքականության շնորհիվ: Մինչդեռ Արցախում սպորտը զարգացնելու գործում անթերագնահատելի է նաեւ առանձին անհատների դերը: Արթուր Շիրինյանը երկու տարի առաջ հանձն առավ հիմնադրել եւ նախագահել Արցախի ժամրամարտի ասոցիացիան՝ նպատակ ունենալով Արցախում զարգացնել եւ մասսայականացնել ժամրամարտը որպես օլիմպիական մարզածեղ: Վերջին երկու տարիների ընթացքում արցախյան մարզաշխարհում հաճախ են արձանագրվում ժամրամարտ մարզածեղից անցկացվող միջոցառումներ, ինչպես նաեւ մեր ժամրամարտիկները հնարավորություն են ունենում մասնակցել տարբեր մրցաշարերի ԳԳ-ում:

տարիքային կարգերում 133 մարզիկ ԳԳ 18 քաղաքներից եւ 15 մարզիկ՝ Արցախից: Առաջնությունն իրենց ներկայությամբ պատվեցին համաշխարհային ճանաչում ունեցող հայ ժամրամարտիկներ Գոռ Մինասյանը, Սիմոն Մարտիրոսյանը, Նազիկ Ավդալյանը, Տիգրան Մարտիրոսյանը: Բացման հանդիսավոր արարողությունը սկսվեց ասոցիացիայի կողմից նրանց շնորհակալագրեր հանձնելով: Աջակցության համար շնորհակալագրերի արժանացան նաեւ Ռուբեն Ալեքսանյանը, Վահրամ Ավագյանը եւ ԳԳ ժամրամարտի ֆեդերացիայի գլխավոր քարտուղար, ժամրամարտի ԳԳ ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Փաշիկ Ալավերդյանը: Ներկա էին արցախցի վետերան-ժամրամարտիկներ Գոգարիկ Ավետիսյանը, Միշա Ավետիսյանը, որոնց նույնպես շնորհվեց շնորհակալագիր:

Շուշի, եղան Գոռնոտի կիրճում, իսկ երեկոյան «Կարկառ» ճամբարում խարույկի շուրջը ժամրամարտիկներն ավելի մոտիկից



կարողացան չփվել իրար հետ: Փաշիկ Ալավերդյանը ելույթի խոսքում շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար եւ ցանկացավ, որ Արցախն այնքան ճանաչելի դառնա աշխարհին, որ արցախյան մրցադաշտներում անցկացվեն եվրոպայի եւ աշխարհի ժամրամարտի առաջնություններ:

Ցուցադրական ելույթներով հանդես եկան անվանի ժամրորդներ Գոռ Մինասյանը եւ Սիմոն Մարտիրոսյանը, որոնք աշխարհում ակտիվորեն մասնակցում են մրցումներին: Գոռն 130 կգ եւ Սիմոնը 170 կգ ծանրաճողի քաշերով կատարելով հրում եւ պոկում վարժություններ՝ ժամրորդները ցույց տվեցին ժամրամարտի բարձրագույն մեղմանը: Ինչպես առանձնացնեց Փ.Ալավերդյանը, ժամրորդները նպատակ ունեցան Արցախի մր-

ցադաշտում եւս ցույց տալ իրենց հմտությունները: Մասնակից մարզիկների շարքում ուշագրավ էին աղջիկ ծանրորդները, որոնք առաջինը հանդես եկան: Աղջիկների թիվն զգալի էր առաջնության մասնակիցների մեջ, ինչը վկայում է այն մասին, որ այլեւս չպետք է թերահավատորեն վերաբերվել աղջիկների կամ կանանց՝ լավ ծանրորդ լինելու հանգամանքին: Զե՞ որ մենք ունենք դրա լավագույն օրինակը. ԳԳ սպորտի վարպետ, ժամրամարտի աշխարհի եւ եվրոպայի կրկնակի չեմպիոն Նազիկ Ավդալյան: Առաջնության ամենափոքր մասնակից, 2011թ. ծնված Յուլյա Շիրինյանն զբաղեցրեց առաջին տեղը: Էլիմա Նազարյանը եւ Ալեքս Աբրահամյանը եւս արժանացան առաջին տեղի: Ռոմիկ Միքայելյանը գրավեց երկրորդ, իսկ Արտյոմ Արզումանյանը՝ երրորդ մրցանակային տեղը: Մարզիկները պարգևատրվեցին մեդալներով ու պատվոգրերով:

ՆՏԱԳԻԾ

ԱՐԵՎԻ ՎԵՐԱԴԱՐՁ



Ամուր հավատք, Գորբանակ, Պաշտպանված հայրենիք:

Գոռ ԽՈՒՂԻՆՅԱՆ

Կխտարի պես ոտքի տակ է տալիս լեռներն ու ժայռերն այնպիսի թեթևությամբ, ասես չի զգում հողը, կարծես ճախրում է արծվի նման: Ինքն էլ չգիտի՝ եղնի՞կ է, թե՞ արծիվ, զուցե երկուսը միաժամանակ:

Չայ լինելուս հպարտությունն առաջին բառս հեզելուց, առաջին քայլս անելուց էլ ավելի վաղ եմ զգացել: Ուղեքս հավում և ուժ եմ ստանում քո հողից, ձեռքերս շոյում են ծաղկունքի պես-պես ու ծաղկեցունքն են սիրտս թովշությամբ: Իմ հոգին քո երկնքի լազուրում արծվի նման ճախրելով է դառնում աստվածային: Ես ելևէջում եմ քո գրկում, ու սերս դառնում է տիեզերական: Երանելի եմ, որ իմ գոյից անդին կխառնվեն քեզ որպես աքաղաղ սիրեցյալ: Դու շատ ավելին ես, քան սերը, պաշտամունքը: Հայաստան, առանց քեզ ես պարզապես չկամ:

Այսպես հասուն էլ ծնվեց հաստատական ու կայացած, թույլերի և կենդանիների պաշտպան, զենքի, մարտարվեստի, հայրենիքի սիրահար: Գարնանային մայրամուտին՝ 1991թ. ապրիլի 7-ին, երկնքի մուգ կապույտից մի փոքրիկ լույս իջավ ճոճկանի Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցու խաչին ու տարածվեց գյուղով մեկ: Ֆրունզիկ և Անահիտ խուղինյանների ընտանիքում լսվեց առաջին անգամ զուգուգու մանկական ճիչը, որ բնավ էլ լաց չի իջեցրեց, ասես ողջույնի կանչ լինեք: Մայրության և գեղեցկության տոնին Տերը կարծես նվեր ուղարկեց տիկին Անահիտին: Որդու ծնունդը մի առանձնակի ուրախությամբ լցրեց խուղինյանների օջախը: Չկան, նեղույններն ու դժվարությունները ոչինչ էին այն բերկրանքի համեմատությամբ, որով լցնում էր նորածին որդին իր ներկայությունով: Ֆրունզիկն ու Անահիտն աշ-

խատում էին ճոճկանի դարձում: Մաթեմատիկա դասավանդող Անահիտը, որ նաև հրաշալի հրածիգ է, իր որդիներին՝ Գոռին ու Գարիկին առաջինն ինքը սովորեցրեց հրազենից կրակել: Գոռը շատ էր տարբերվում իր տարիքի տղաներից մտածելակերպով և ուժով: Որքան էլ բնությունն ու ընթերցանությունը, ազգագրական երգերը սիրելի էին տղայի մանկական հոգուն, այնուամենայնիվ, նա ձգտում էր մարտարվեստին և զինվորական կյանքին: Տասնմեկ տարեկան տղայի խնդրանքով ծնողները տեղափոխվեցին Վանաձոր: Գոռը դարձրեց ավարտելու հետ մեկտեղ արդեն տիրապետում էր կարատեի և քիթ-բոքսինգի մարտարվեստին: Նա տասնվեց տարեկանում ընդունվեց Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտ: Գոռը վաղուց էր ընտրել իր կյանքի ուղին և հաստատական առաջ էր ընթանում: Գերազանցության դիպլոմն իրավունք է տալիս ծառայության անցնելու ցանկացած զորամաս: Ու Գոռն ընտրեց ամենադժվար և վտանգավոր տեղամասը:

- Տաք առանձնասենյակն ու ասֆալտը իմը չեն, իմը երկնքին հասնող լեռներն ու կիրճերն են, անտառներն ու սահմանն են: Վերջում ճոճկան եմ վերադառնալու: Ես առանց գյուղի չեմ կարող ապրել:

Որքան ատելի է թշնամու լեզուն, նույնքան օգտակար է այն իմանալ: Ու հետախույզ Գոռը հրաշալի էր տիրապետում թուրքերենին, հարբեջաներենին: Նա հաճախ էր թափանցում թշնամու թիկունք և միշտ փայլուն էր կատարում ցանկացած առաջադրանք: Տևական բացակայությունից հետո կարոտած էր վերադառնում «Եղնիկներ» զորամասը, իր ԿԽՏԱՐԱՇԵՆԸ: Ամեն մի հայ հերոս սարսափն է թուրքի, ու թշնամին դողդողալով գլխահին է դնում նրա համար: Ամեն մի հայ հերոս հենց այնպես չի հեռանում, թողնում է հետագիծն իր լուսաշողի, որ վերադառնա:

- Թուրքի գյուղերն ինձ չի դիպչի, ինձ համար մի անհանգստացիր, մա՛:

Հաճախ էր կրկնում. «Ուս ուսի պես է պահենք ես պոստերը, որ հակառակորդը չկարողանա իր նպատակին հասնել: Եթե ես պոստերը անառիկ պահենք, մեր տունն ու հայրենիքն էլ անառիկ կմնան»: Անչափ ուշադիր էր զինվորի նկատմամբ:

- Մի տխրեք, տղերք, իմ զինվորը հպարտ և զգոն պետք է լինի:

- Ո՞ւմ ես կարոտել, մայրիկի՞դ, սիրածդ աղջկա՞ն: Վերցրու՛ հեռախոսս, գնա խոսիր և խաղաղված եկ:

Աշնան հանդարտ առավոտ է: Արեգակը բարձրանում ու թագադրում է Լալվարի գագաթը: Լոռվա չնաշխարհիկ գրկում արթնանում է ճոճկանն իր խաղաղ նիրհից և ժպտում է մի առանձին խորհրդավորությամբ ու հպարտությամբ:

- Որդիս վերադարձավ, Գոռս, Արծիվ Գոռս վերադարձավ:

Ճոճկանը ՀԵՐՈՍԱՄԱՅՐ է հիմա ու այլ հայացքով է նայում աշխարհին: Երկնքում իր անհաղթ թևերն է տարածել Արծիվը: Նա իջնում է ներքև, սուր հայացքով հսկում է տարածքն ու ամենքին, հետո բարձրանում է բարձրաձայնով և վեր, դառնում է համարյա մի կետ: Հեռացավ, մտածում եմ: Ոչ, ո՞ր պետք է հեռանա: Ահա կրկին վերադարձավ, հավերժներից: Աչքս չեմ կտրում երկնքից: Ինձ դուրս է Արծիվ ճախրը: Թևերը տարածած մոտենում, փարվում է գյուղին, հետո սուրալով անհետանում է, որ վերադառնա... Օրն իր տոնական հանդերձն է հագել: Ճոճկանը ՀՀ անկախության տոնի հետ մեկտեղ բազմաթիվ հյուրերի, ընկերների, համագյուղացիների ներկայությամբ մեծ շուքով նշում է իր հերոս որդու՝ Արծիվ Գոռի վերադարձը: Ճոճկան համայնքի միջնակարգ դպրոցն անվանակոչվեց Գոռ Խուղինյանի անունով: Արծիվը կրկին իջնում է ներքև, այնքան մոտ, որ իրեն լսելի լինի ամենասիրած ուսուցչուհու՝ ընկեր Վեներա Վարդույանի խոսքը:

- Կապիտան Գոռ Ֆրունզիկի խուղինյանը՝ մեր Արծիվ Գոռը, մեր սիրելի աշակերտն ու զինվորը, որ հավերժացավ է ու հավիտյան մեղք էր լեռներին ու ձորերին, հայրենի հողի Տիրոջ ու Պաշտպանի սրբացած իրավունքով վերադարձավ իր հայրենի դպրոց՝ իբրև պատվանուն, իբրև ուղեցույց և հայրենական: Հեռուստուն, ավա՞ղ, զին ունի, ջահել կյանքի զին, ու ապրածն է դառնում լուսաշողային առասպել: Հավերժ լույսերի մեջ փառք ու խնկարկուն հերոսներին...

Գոռի մայրն էլի մտովի գրուցում է որդու հետ. «Կարծում ես առանց քեզ ուշադիր էր զինվորի նկատմամբ:

քո անտես ներկայությունը, շունչը: Դու իմ աչքերում ես, իմ սրտում»: «Ների՛ր ինձ, մայր, սիրում եմ բոլորիդ: Ինձ ճիշտ հասկացիր, իմ կյանքի զինն իմ զինակից ընկերների փրկությունն է, իմ հայրենիքի պաշտպանությունն է, թշնամու ոչնչացումն է»:

2017թ. փետրվարի 23-ի ուշ գիշերին թշնամին ուժեղ հրետակոծությամբ փորձեց կրկին առաջ սողալ: Հեռակետում յոթ զինվոր էին ու կապիտան Գոռը: Նա հրամայում է զինվորներին մնալ դիրքերում և մեծակ է ընդունում մարտը: Մեծ տրամաչափի գնդացրով ոչնչացնում է թշնամուն, կասեցնում է ներխուժումը, բայց վերջին գնդակը... Փետրվարի 23, հենց իր սիրած տոներից մեկը, որ իր հայրիկի տոնն էր համարում... Կյանքը սիրում է ծաղկել ամենուր: Նա նույնիսկ քարն է ծաղկեցնում: Հաշտ չէ միայն մետաղի հետ... Կյանքը... բեկորների բազմաթիվ վնասվածքներից...

«Ես մեծակ ընտրեցի իմ ճանապարհը, մա՛, մեծակ կռվի բռնվեցի, ոչնչացրի սահմանախախտներին: Գիտեի, որ սա իմ վերջին կռիվն է: Տես՛ մա, ես մեծակ գնացի, բայց վերադարձա հազարացած... Հիմա բոլորի սրտերում եմ, հիմա ամենքին եմ»:

Միշտ շտապում էր ու չէր համբերում: Գիտե՞ր, որ կարճ ժամանակ է հատկացված, թե՞ ճակատագիր է հերոսի:

Վանաձորի Վ. Տերյանի անվան հ.5 միջնակարգ դպրոցում, ուր կա նաև մեր հերոսի անվան դասասենյակ և Փառքի անկյուն, կապիտան Գոռ Խուղինյանի հիշատակին խաչքարի բացման արարողությամբ ժամանակ էլ ամպերի միջից լայնատարած թևերով նույն արծիվն էր մասնակից երկնքից: Գուցե, այո՛:

«Ես երբեք չհասցրի առաջինը շնորհավորել քո ծնունդը, տղաս, դու ինձանից առաջ իմ տոնն էիր շնորհավորում: Փորձեցի մեկ անգամ առաջինը ես զանգեմ քեզ: Հեռախոսի մեջ կրակոցի ծայրեր լսվեցին, անհանգստացա: «Ամեն ինչ լավ է, մա՛, գիտեմ, որ ծննդյանս օրն է, տղաները հրավառություն են անում: Լարվածություն չկա, սուտ լուրեր են, մի հավատա, նույնիսկ հեռուստացույց մի նայիր»:

Փետրվարի 21-ին զանգեց. - Մա՛, աղջնակիս նկարներից ուղարկիր, կարոտել եմ երեխայիս:

- Դու էլ իմ երեխան ես, դու էլ քո նկարն ուղարկիր: Ես էլ քեզ եմ կարոտել:

Ուղարկեց, Մռավ լեռն էր միայն:

- Բա դու որտե՞ղ ես, ես քեզ եմ ուզում տեսնել:

- Մա՛, ես այս լեռան վրա եմ, գտիր ինձ:

Մռավ լեռը... Մռավի լեռնաշղթան զարդարում է Արցախի հիասքանչ բնությունը, Կուրի միջին հոսանքի աջակողմյան վտակների ու թարթառի ջրբաժանն է և, ավա՞ղ, սահման... Բազմաթիվ կռիվներ, անհաղթ հերոսներ տեսած լեռն անվանում են նաև Արիության լեռ: Հետախուզական առաջադրանքների կատարողականն ու մարտական գործողություններին մասնակցությունը գաղտնի էր պահում, այն իրենց էր և բանակին: Միայն Մռավ լեռը գիտի Արծիվ Գոռի բոլոր սխրանքները, բայց նա այդ մասին լռում է լեռնաբար: Իսկ ստացած պարգևները, շքանշաններն ու մեդալները հուշում են...

Երեքամյա դուստրը՝ Անահիտը, Լուսինեի և Գոռի աղջնակը, ընդամենը վեց ամսական էր և երեք անգամ է տեսել հայրիկին: Հիմա իր հերոս հոր գլխարկն է կրում ու հրեշտակային անմեղությամբ հպարտանում է իր հորով:

- Պա՛պ ջան, դու գիտե՞ս, որ ես պետք է սովորեմ Գոռ Ֆրունզիկի խուղինյանի անվան դպրոցում, քո՛ անվան դպրոցում: Պատիվ ունեմ, պա՛պ:

- Պատիվ ունեմ, լայն ժպտում է Լալվարը:

- Պատիվ ունեմ, խշշում է գետը Դեբեդ:

- Պատիվ ունեմ, հպարտանում է ճոճկանը:

Ես և հերոսամայր Անահիտը Մռավ լեռան վրա փնտրում ենք Արծիվ Գոռի պատկերը: Միայն ծյուն և մերկացած ծառեր: Լեռան աջ մասում ժայռապատկեր է տղամարդու՝ դեմքով երկինք նայող: Չախ մասում գրկախառնված զույգ է, մի քիչ վերև՝ Հովի. Թունանյանին շատ նման մեկն է ժպտում:

Մեր հերոսի՝ Արծիվ Գոռի ծնունդն էլ, կյանքն էլ, հավերժությունն էլ խորհրդավոր է ու գաղտնիքներով, առեղծվածներով լի: Մի բան է անհերքելի. Աստծո ուղարկած լույսը երբեք չի խամրում, այն միշտ վառ է մնում:

Հրանուշ ՍՈՒԶԻԱՅԱՆ
Մանկավարժ, ՀԳՄ անդամ
Գյումրի

Խոսք հիշատակի
ՌԻՏԱ ՎԱՅՅԱՆ



Ավդուռի մտավորականությունը ծանր կորուստ կրեց. կյանքի 82-րդ տարում հավիտենության ուղին բռնեց լավագույն մանկավարժներից մեկը՝ բազմավաստակ ուսուցչուհի Ռիտա Գասյանը: Մարդ, որ իր ողջ կյանքը նվիրաբերել է մատաղ սերունդի կրթության վեհ գործին:

Ռիտա Գասյանը ծնվել է 1937թ. դեկտեմբերի 10-ին Մարտունու շրջանի ճարտար գյուղում:

1959թ. ավարտելով Շուշիի մանկավարժական ուսումնարանը՝ աշխատանքի է անցել Կուրոպատկիճոյի 7-ամյա դպրոցում, այնուհետև՝ Մաճկալաշենի 8-ամյակում: 1960թ. որպես դասավար աշխատանքի է ընդունվել Ավդուռի 8-ամյա դպրոցում: 1963-1971թթ. ապրել է Բաքվում: 1972թ. ընտանիքով տեղափոխվել է Ավդուռ և կրկին աշխատել դպրոցում՝ որպես դասավար:

Միաժամանակ ավարտել է Աղբյուրանի Լեռնի անվան մանկավարժական ինստիտուտի հեռակա բաժինը (տարրական կրթության մեթոդիկա բաժինը):

Մանկավարժական գործունեության տարիներին ձգտել է միշտ լինել պահանջկոտ, համբերատար և անկողմնակալ: Նա օժտված էր մանկավարժին բնորոշ լավագույն գծերով, պատասխանատու էր իրեն վստահված բոլոր գործերում, աշխատասեր էր, լավագույն դասավար, ամեն ինչ անում էր մեծագույն խնամքով, ուստի և վայելում էր մանկավարժական կոլեկտիվի սերն ու համակրանքը: Երիտասարդ մանկավարժների համար լավագույն օրինակ էր, ամեն ինչ անում էր տակտով՝ լինի գովեստ, թե դիտողություն:

Աշակերտների հանդեպ վերաբերմունքը խիստ էր, հետևողական, արդարացի էր և միջամտող:

Սիրելի ուսուցչուհի, մեր դպրոցը հպարտանալու իրավունք ունի, որ ունեցել է Ձեզ նման մանկավարժ:

Ձեր անունը հավետ կապրի, քանի որ ապրում եմ Ձեր սաները, քանի կա Ձեր դպրոցը:

Մարտունու շրջանի
Ավդուռի հիմնական դպրոցի
մանկավարժական
կոլեկտիվ

ՀԱՄԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ՝
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝
«Լուսարար»
ՓԲԸ

Ստեփանակերտ,
Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99,
E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների և փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3000: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 17.10.2019թ.: